

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse :

Rédaction du „Droschak“,

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՃՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Ա Ր Ա Մ Ա Ր Ա Մ Ե Ա Ն

(Ա Շ Ո Տ, Թ Ա Թ Ո Ւ Լ)

Օգոստոս 9/20-ին Կարին, հրապարակի վրայ, կախաղան բարձրացուցին „Դաշնակցութեան“ ամենէն նշանաւոր գործիչներէն մէկը — Արամ Արամեան:

Արամեանը ձերբակալուած էր 1896 յուլիս 2-ին Բասէնի մէջ, և այն ժամանակէն ի վեր կը գտնուէր Կարինի բանտը, ենթակայ հազար ու մէկ հարցաքննութիւններու, սոսկալի տանջանքներու և տաճիկ դատավարութեան ամէն տեսակ մեքենայութիւններուն:

Արամեանը մեռաւ „կեցցէ՛ յեղափոխութիւն“ աղաղակը բերնին... Զայնակցելով մեր նահատակ ընկերոջ վերջին խօսքերուն, կը խոնարհինք անոր անմոռանալի անւան առջև, որ կուգայ այսօր դժբախտ հայ ժողովուրդի ազատութեան գործին սրբազան հիմնաքար մըն ալ աւելցնելու:

Ե Ղ Բ Ա Յ Ր Ե Ն Ք Մ Ե Ն Ք

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԻ ՄԱՆԵԳՕՆԱԿԱՆ ԴԵՐԱԳՈՅՆ
ԿՕՄԻՏԷԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՒՄ

Մէկ չենք ծագումով. մէկ չենք լիզումով կրօնով. մէկ չենք նոյնիսկ հայրենիքով, բայց մէկ ենք դժբախտութեամբ: Դժբախտութիւնը մեզ միացրեց:

Մենք եղբայր ենք դժբախտութեամբ:

Տո՛ւր ձեռքդ, դ ժ բ ա խ տ եղբայր:

Տարբեր են մեր մայրերը, քոյրերը, բայց տարբեր չեն նրանց լիկող, բռնաբարոյները: Զոկ-ջոկ են մեր եկեղեցիները, բայց նոյնն է նրանց պղծողը, նոյնն է աւերողը: Տարբեր անուն ունեն մեր հայրենիքները, մինչև իսկ շատ հեռու իրարից, — մէկը յրօնութեան մայրաքաղաքի՝ այս կողմը, միւսը այն կողմը. բայց մէկ է այն լուծը, որ դրած է երկուսի վրին, մէկ այն բռնութիւնը, որ շղթայել, ստրուկ է դարձրել մեզ:

Ստրկութեամբ եղբայր ենք:

Տո՛ւր ձեռքդ, ս տ Ր ՈՒ Կ եղբայր:

Մենք արիւն շատ թափեցինք, բայց ջոկ-ջոկ. թշնամին չխեղդւեց նրա յորձանքներում, այլ միայն լւաց իր սուրբը: Մենք շատ անգամ և շատ տեղ բողբոջեցինք, բողբոջ արդար և մարդկային: Բայց, աւա՛ղ, մեր բողբոջ մի ա ձ ա յ ն չէր, որ աշխարհ սասանեցներ, և ոչ էլ ն եր դ ա շ ն ա կ՝ որ կարծր սրտերը կակղեցներ: Սակայն մէկ է մեր արիւն թափողը, մէկ՝ մեր բողբոջ նպատակը:

Մենք եղբայր ենք բողբոջով եղբայր՝ կու՛ով:

Տո՛ւր ձեռքդ, կ ու ճ Ղ եղբայր:

Դար եկաւ, դար անցաւ, բայց սուլթանական բռնութիւնը չանցաւ: Հալածական մի տեղից՝ նա ապաստան գտաւ մի այլ տեղ, ընկճւած մի անկիւնում, նա գլուխ բարձրացրեց մի այլ անկիւնում: Եւ այն ժամանակ, երբ հէլէն աշխարհը ողողում էր իր քաջ որդիների սուրբ արիւնով, երբ Ցափեւաս լեռների վրայ, Բօցարիս դաշտերում և Միաուլիս ծովերի վրայ ոչ կեանք, ոչ ընտանիք, ոչ մի զոհ չէին խնայում ստրուկ հայրենիքի ազատութեան համար, Բալկանի միւս կողմը՝ սէրբը, ուռմէնը, չէրնօգօրցին, բուլցարը սոսկում էին վառօդի հոտից, իսկ աւելի հեռուն՝ հայկական բարձրաւանդակի ամբողջ տարածութեան վրայ՝ տիրում էր ստրկութեան դարեւոր նիրհը...

Եղբայրը եղբոր ձայնը չսեց:

Եղբայրը եղբոր չճանաչեց:

Ապստամբ յոյնի կոչը հասաւ հեռաւոր, բայց ազատասէր անգլիացուն, ֆրանսիացուն, իտալացուն, սակայն անլսելի մնաց մերձաւոր, բայց ստրուկ հարեանին՝ սէրբին, բուլգարին, հային, մակեդոնացուն: Եւ ամօ՛թ մեզ: Ճիշդ այն ժամանակ, երբ Ստամբուլի տիրոջ արիւնածարաւ զօրքերը քանդում էին յոյն գիւղերը և պղծում նրանց եկեղեցիները, Սուլթի, Ահառնանիի և Միսսօլունգիի բարձունքների վրայ, — բուլգարական և մակեդոնական գաւառներում հաւատարմութեան երգում էին տալիս սուլթանին, և կամ՝ երբ յունական և բուլգարական կոտորածների սոսկալի պատմութիւնները աշխարհ էին ալեկոծում, — Հայաստանի ծոցում, Մուշի

սուլթան սուլթա Կարապետի՝ սեղանի վրայ՝ վանականները վառուդի փոխարէն խուկն էին ծխում և շարականներ երգում ստրուկ եղբայրների ազատութեան համար, իսկ Կ. Պօլսի հայոց պատրիարքները քրիստոնէական տաճարներում սրտաբուլի աղօթքներ էին վերադառնում գէպի երկինք, սուլթանի արեւշատութեան համար...

Եղբայրը եղբոր հառաչանքը չսեց:

Եղբայրը եղբոր ձեռք չմեկնեց:

Մեզ համար կ'ուլտ դարձրինք խտրութիւնը: Խտրութիւն կրօնի, խտրութիւն ազգութեան, խտրութիւն հայրենիքի ստրկութեան: Թշնամու սուրը միայն խտրութիւն չգրեց. նա մորթեց յոյնին, բուլղարին, մակեդոնացուն, հային՝ նոյն ուժով ու նոյն ատորժակով. պղծեց բոլորի սրբութիւնները նոյն լըբութեամբ, հարեմքաչեց բոլորի կոյսերին՝ նոյն կրքով: Թիւրքը մորթեց առանց խտրութեան. իսկ մենք՝ թշնամու զոհերս՝ մորթեցինք խտրութեամբ: «Յոյներն են պատերազմողը» — ասաց բուլղարը և յետ քաշեց 1897-ին: «Հայերն են ջարդուղները» — մտածեցին յոյները և ձայն չհանեցին 1894-1895-ին: «Մեզ ի՞նչ, որ կրէտացիներին կոտորում են» — ասաց սերբը, մակեդոնացին, ռումէները չէրնօգօրցին:

Եղբայրը եղբոր խտրութիւն դրեց:

Եղբայրը եղբոր... դաւաճանեց:

Դէպքերը յաջորդեցին գէպքերին, մէկը միւսից կարեւոր, մէկը միւսից արեւնոտ, սակայն չգտնեց մի հատ հզօր, աղդեցիկ, հեղինակաւոր ձայն, որ հնչէր Աթէնքից մինչև Երզրում, Զէյթունից մինչև Սև-Լեռներ, գոչելով. «Միացէ՛ք, ձեռք ձեռքի տէք, ո՛վ դուք ստրուկ եղբայրներ. մոռացէ՛ք ձեր ներքին, փոքրիկ հաշիւները, ո՛վ դուք, փոքրոգի ազգեր, և միացած ոտքի կանգնեցէ՛ք»: Այդ միացնող ձայնի փոխարէն ամէն կողմից լսեց գիւտնաբէտի ապականիչ շշուկը, մի անգամ Բիկօնսֆիլդի բերանով միւս անգամ Վիլհէլմի, երրորդ անգամ Աւրապելօվի կամ Հանստոյի շրթունքներով: Եւ մենք ակնատես եղանք, թէ ինչպէս այն միջոցին, երբ Ալեքսանդր II-ի զօրքը յաղթական մուտք էր գործում Երզրում, պատրաստ՝ ձեռք մեկնելու ապստամբ ժողովրդին, հայերի մտքովն էլ չէր անցնում տեղից շարժել, և կամ երբ թիւրք զինուորները աւերում էին Եանեայի և Արտայի դաշտերը, բուլղարները՝ յիմարացած Մուրադօվի խօսքերից՝ «քաղաքական չէզոքութիւն» էին պահում, և կամ սերբերը խաբած Վիլհէլմի պատգամներից՝ «բարեացակամութեան» համբոյրներ էին ուղարկում Երզրդի պետին...

Եղբայր լինելու փոխարէն՝ մենք դիւանագէտներ եղանք, և դիւանագիտութեամբ մեր տունը քանդեցինք...

Բայց բաւական է:

Մեր ետեւը կանգնած է մի ամբողջ դար, հարիւր տարւայ մի ամբողջ պատմութիւն, — պատմութիւն հա-

լածանքի, արեան, կոտորածի և ջարդերի: Յե՛տ նայիր, եղբայր, և տես: Մի ամբողջ դար անջատ գործեցինք, զատ-զատ կուեցինք, անթիւ, անբաւ զոհեր տուեցինք: Ժամանակը չէ՞ միթէ, որ այժմ, նոր դարու շէմքի վրայ, այդ զոհերի և նահատակների խնկելի յիշատակը մեր միտքի մեջ և հիմքը լինի: Մէկ ենք դժբախտ անցեալով, մէկ ենք զոհերով, մէկ լինենք և ապագայով, մէկ՝ կուի դաշտով:

Զոհերի արիւնը մեզ մօտեցրեց:

Տո՛ւր ձեռքդ, մի անանք, եղբայր:

Մեր աշխատանքը դեռ շատ հեռու է վերջացած լինելուց և չի էլ վերջանայ ստրուկ Մակեդոնայի և ստրուկ Հայաստանի ազատումով: Այլ երբ ազատ Յունաստանի, ազատ Բուլղարիայի և ազատ Կրէտէի կողքին կը ծածանի ազատ Մակեդոնայի և ազատ Հայաստանի դրօշակը, այն ժամանակ սուլթանական բռնութիւնը թօթափած աղգերը՝ Աթէնքից մինչև Վան և Լիբանանից մինչև Բաղդադ, միացած և ձեռք ձեռքի տաւած, բորբոքած անցեալի վրէժով, և ոգևորւած ապագայի յոյսերով, իրենց օղակի մէջ պիտի խեղդեն Երզրդի բռնապետութիւնը, որպէս զի վերջնապէս քաղաքակրթութեան վերադարձնեն այն բոլոր երկիրները, որոնք, 15-րդ դարից սկսած, օսմանեան բռնապետութեան մահաբեր շունչից չօրաւնում և ամայնում են...

Դա՛ թող լինի մեր երկրորդ միաստիան:

Դա՛ թող լինի և մեր ամենամեծ վրէժը:

Մէկ է մեր միաստիան, մէկ մեր վրէժը, — մէկ պիտի լինի և մեր կուր: Մէկ է մեր թշնամի, մէկ պիտի լինենք և մենք: Մենք բոլորս նոյն բանակի զինուորներ ենք:

Տո՛ւր ձեռքդ, զինակի՛ց եղբայր:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Խ Ա Ր Բ Ե Ր Դ Է Ն

27/9 յունիս 1899

Այս գեղածիծաղ օրերուն ուր կեանքը կը վերածնի և աշխատութեան հոգին իր վերկենցաղումը կ'ունենայ արեւ աշխարհի տակ ամէն տեղ ու ամէն անկիւն՝ գուցէ մեր արտասահմանի եղբայրները վայրկեան մը հոգեկան բաղձանք ունենային երազելու որ Հայաստանի արիւնոտ դաշտերուն վրայ ալ եթէ ոչ վարդենիներ, գէթ կարմիր կակաչներ կ'արգասաւորէին, խաբուսիկ կենդանութեան մը պատրանքը ստեղծելու հոգեվարք հայրենիքի աչքերուն:

Թունաւոր Յուսահատութիւնը մեզ այսօր ածխաջուրցած պիտի ըլլար, եթէ տակաւին փրկարար, աստուածային կուր՝ քաղաքակրթած, ազնիւ ժողովուրդներու առջև մեր մարտիրոսութեան պատմութիւնը ներագործելէ ետք՝ մեր միշտ վստահ Յաղթանակին անշահ գաղափարը չվարդագունէր մօտաւոր հորիզոնի

մը վրայ, պերճախօս լեզուով վաւերացնելու այն գոյութեան պատմական իրաւունքը որ կը պահանջէր մեր օրօրօցի ու որբերու աղաղակէն՝ մինչև անյիշատակ գերեզմաններու անունովը։ Ու զէնքը եթէ գերագոյն միութարութիւնը, հոգին չըլլար այս կիսամեռ ժողովուրդին՝ ինչպէս ապրէինք այս կեանքը, ու եթէ անգամաւորաւ թեւէն և ջախջախաւ սրունքէն ետք՝ դեռ ահաւնէրը չմնային յուսահատ պայքարի վերջին գոտեմարտն ալ գլուխ հանելու, ինչպէս գիշերէն ետք առտւայ լոյսը տեսնելու պէտքն զգայինք...

... Այս պահուն մեր աչքին առջև՝ օրւան երկնած չարիքներուն հրէշ հերոսն էր Արաբկիրցի Միսթար Փիլիկան թողը — ծածկանունով Գեղամ — ըսեալ բախտախնդիր մատնիչը։ Քսանը վեց, քսանը եօթը տարեկան, դէմքի պաղ և անարիւն դեղնութեամբ մը որ եղեռնագործ հոգի մը կը մատնէ. միջահասակ, նիհար ըսելու չափ կազմութիւն մը. սև աչքեր, սև մազ ու նորաբոյս ընչացք վերի շրթունքին վրայ։ Ատեն մ' առաջ իբրև մարտական՝ 96-ի թաւակներուն Եզմիրէն հայրենիք կը վերադառնայ խիստ ողորմելի վիճակի մէջ. ձեռները կապանքի տակ ու բանտէքանտ թափառալիք — ամէն երկիր վերադարձողի ճակատագրով, — անօթի, գրեթէ կիսամեռ, այնպէս որ չքաւոր հայ բանտարկեալներ իրենց աղքատ քսակին տակ քանի մը տասնուորդի գլխաւորութիւնը կը գտնեն՝ եղբայրասիրական պարտաւորութեան մը հասնելու։ Յետոյ այլևայլ քաղաքներ հայրենասէրի անունով գողու ոտք կը քսէ, հոս հոն անբարոյական վարժապետի դէմքը կը ցուցնէ և ամէնէն վերջ կանգ կ'առնէ Կարին, ուր կըսկսի զգուշի մատնութիւններու շարք մը։ Ահն, Արաբկիր և Տիգրանակերտ տեղոտ խուղարկութիւններ իրարու կը յաջորդեն և մօտ հարիւրի չափ ձերբակալութիւններ տեղի կ'ունենան իր իսկ թելագրութեամբ. գուցէ այդ բանտարկեալներէն շատերը անձնապէս անծանօթ են իրեն և անունով միայն ծանօթ. ուսուցիչներ կամ բարեկեցիկ երիտասարդներ, ու թիւրք ոստիկանը՝ անօթի անգղի մը վայրագ ընչաքաղցութեամբ իր ճիրաններուն և կտուցին բոլոր բիրտ ուժը գործածելու պատեհութիւնը կը գտնէ։ Այս շարժում իսկ նոյն այդ բանտարկեալներէն երկու ականցի եղբայրներ եօթնական տարի բերդարգելութեան դատապարտեցան, այն միակ յանցանքով որ մատնիչին կանխաւ բերած մէկ ծրագիրը գտնեալ է քովերէն։ Արաբկիրէն ևս կարգ մը երիտասարդներ տեղոյս կեդրօնական բանտը փոխադրեցան, ասոնց ալ միակ քրէական յանցանքը այն է որ իրենց տուններէն դէպքի հրդեհներէն մնացած ատրճանակի վառած կտորուանքներ ելած են։

Տիգրանակերտի կուսակալութեան և մասնաւորապէս քաղաքին մէջ խուզարկութիւն և բռնող հալածանք այն աստիճանի հասած են որ շուկացիներ՝ գրպանին կարած կը պտտին հրապարակին վրայ. որովհետև նոյն իսկ քաղաքացիին ապահովութեան համար վարձատուող ոստիկանը անմեղներու ծոցէն կամ գրպանէն ներս այլևայլ յայտնի թղթեր սպրդեցնելով՝ հեղ մըն ալ ետ կը դառնայ ու քայլ մը անդին կը ձերբակալէ միամիտ մարդը։ Այս գծուծ ստրկութիւնը և ոչ իսկ զարմանալի կամ մեղադրելի հանգամանք մըն է թիւրք պաշտօնեային նկարագրին վրայ։ Անցած օր ոստիկանի մը հետ էր որ այդ նկատմամբ հարեանցի դիտողութիւն մը

կ'ընէինք. մեր ուղղադատ խօսակիցը իրաւամբ հաստատեց թէ անկարելի էր որ պաշտօնեայ մը ամբողջ տարւայ մը ընթացքին երկու ամսական միայն ստորագրելէ ետք՝ նիւթական ակնյայտի չքաւորութեան մէջ հոգիի վեհանձնութիւն պահելով՝ նկարագրի մաքրութեան հոգածու ըլլար։ Թիւրք հասարակութիւնը կրնար հոգեպէս այնքան մեծցած ըլլար իր մեղրէսէներուն ու հիւճրէներուն մէջ որ կարող ըլլար պարտաւորութեան զոհարարութիւնը ըմբռնելու և գործադրելու չափ անկաշառ զաւակներ ծնիլ իր ծոցէն։

Ու արաբկիրցի Աղբը՝ հոս սրճարաններու և գինետոններու մէջ շւայտ կեանք մը կը քաշքշէ՝ օրական երկու մէծի տի կանխիկ վարձատրութեան հետ, ոստիկանի և ոստիկան-գոմիսէրի մտերմութեամբ։ Բայց ուրախառիթ պարագայ մը որ իր մատնութիւններու շարքը սկսած օրէն ազգային անուն և կրօն փոխելով՝ թիւրք կ'ապրի և միւսլիման կ'աղօթէ։

Պատիւ այն ազգին որ ան որդեգրելու երջանկութիւնը կուտայ մեզի։

Եթէ ցաւառիթ պատեհութեան տակ վերջապէս ազգակցի մը մէկ վատ տկարութիւնը հրապարակելու և թքնելու տիւրը հարկը կըստիպէ մեզ, նոյնքան և աւելի խոշոր թուք մըն ալ խարբերողի այն վատ տիպերուն որ Ամերիկայի ազատ հողուն վրայ անձնական կեղտոտ վրիժառութեանց միջոց կը գործածեն՝ փճացած անհատներու և հասարակութեանց զէնքն եղող՝ մատնութեան ճիւղալիւն կերպը։ Ինչպէս ասկէ առաջ Բէստեկ, մօտ օրերս ալ Կարմրի դիւղէն խեղճ մարդ մը ձերբակալեցաւ իր հասցէին եկած «Մարտ»-ի մէկ համարին պատճառով, որուն ամենեւին տեղեկութիւն չունի, քանի որ գրել կարողալ անգամ՝ չի գիտեր։ Կ'ըսէի թէ իր ազգական ժամկոչեանը գրեր էր անոր անունը պահարանի վրայ, կանխաւ այնպէս կարգադրելով որ թիւրք փոստատան ուղարկութիւնը հրաւիրէ։ Ու այս առաջինը չէ, չեմ՝ գիտեր քանիւրորդը իր տեսակին մէջ։ Չէր կրնար արդեւք մեր գաղթականութեան ազնիւ և գաղափարական մասը քերել իր վրայէն նման արատներ, ազդու բողոք մը ըլլալ անմեղութեան ձայնին և արդելք մըն ալ ուրիշ նմանօրինակ ստորնութեանց։ Հայրենիքի տակաւին ծխացող աւերակներուն և լճացած արեան հոտը գէթ զգացման մանր թել մը թրթռացնէր այդ արարածներու կուրծքին տակ՝ ազգային վեհանձնութիւնը ազգային թշնամիին չճախելու, մանաւանդ Յեղափոխութեան գրօշակով ինչ ալ ըլլայ անոր անունը։

Կը լսենք թէ Մուշի գաշտը կ'եռայ, արիւնը եփ կուգայ. Գուրգէնն ու իր ընկերները ազատ սարերու գագաթը կարմիր պսակով կը ծածկեն, անոնց վրայ հերոսի անմահ անունները քանդակելով։ Կեանքը կռիւի մէջ է և մեր ընկերներու փոթորկալից մահէն՝ աւելի թանկագին, աւելի չքնաղ կեանք մը պիտի ծնի, մարդ ու Աստուած ամէն գոյութեան ինքը, Ազատութիւնը։

Քիւրդը կը փլցնէ ու չի նորոգեր, քիւրդը կ'այրէ ու չի վերաշինէր, քիւրդը կըսպաննէ ու չի խղճար. ո՞վ պիտի ըլլայ պաշտպան անտէր Հայրենիքին, ո՞վ պիտի տայ ստեղծագործող հրաշագործ ձեռքը, եթէ յեղափոխութիւնը վար դնէ իր զէնքերը ու կրակը մարէ։ Օրհնեալ ըլլայ տառապանքը որ բողոքը, կռիւը, փոթորիկը կը ծնի։

ՆԱՄԱԿ ԶԱՊԻՆ ԳԱՐԱՅԻՍԱՐԵՆ

1/13 մայիս 1899

Երկար ժամանակ չգրելէս թող չհետեւի թէ տեղիս կառավարական շրջանակներու մէջ արդարութիւն կը տիրէ:

Քաղաքիս իրաւասութեան տակ եղող Անդրէաս գիւղաքաղաքին կառավարական պաշտօնատուներ երկու տարի առաջ այրեցաւ գիշեր ժամանակ. բոլոր գոյքերն ու տոմարները միասին ոչնչացան: Երկու օր ետք քաղաքիս կառավարչի օգնականը, Նիքօլաքի էֆէնտի, Անդրէաս եկաւ և խիստ քննութիւն կատարելով ստուգեց և հաստատեց թէ պաշտօնեաներու ձեռքով այրած էր շէնքը, և գործին հեղինակներն ալ գտաւ: Թէև մինչև այսօր արդէն երկու տարի անցած է, սակայն բարձրագոյն իշխանութիւնը, որ տեղիս այն ժամանակայ կառավարչէն վաւերացեալ տեղեկագիր ընդունած էր, բոլորովին լուռ կը մնայ քեզ և յանցաւորներն ալ կը շարունակեն իրենց պաշտօնավարութիւնը: Այրած շէնքը կառուցեցաւ խեղճ ժողովրդին գրամով և աշխատութեամբ, ժողովուրդ մը — մեծամասնութիւնը հայ — որ իր օրական հացն ալ ձարելու դեռ անկարող է: Բաւական չէր խեղճերուն այս չարաչար աշխատութիւնը և ժամանակի կորուստը՝ քիչ ետքն ալ հասաւ ուրիշ աւելի մեծ դժբախտութիւն մը: Ինչպէս ըսի, բոլոր տոմարներն ալ ոչնչացած էին հըրդեհին մէջ, ուստի յայտնի չէր թէ ով ո՞ր տուրքը վճարած էր և կամ կը պարտէր, և ահա պաշտօնեաները նոր տոմարներ պատրաստեցին և ըստ քմաց գումարներ նշանակելով սկսան բուռն զօրութեամբ գանձել թշուառ ժողովրդէն: Եկուր տես որ ժողովուրդը թալանի ատեն կորսնցուցած էր իւր վճարած տուրքերու ընկալագրերը, ուստի չէր կրնար հաստատել վճարած ըլլալը ու գլուխը ծռեց: Շատ մարդիկ հազիւ զոյգ մը եղ ունէին իրենց մէկ երկու կտոր արտերը վարելու համար, ինչ փոյթ, զապթիկներու ձեռքով ծախեցան ատոնք անհաւատալի աժան գներով. շատերուն տակի անկողինները բռնի քաշեցին, չպիտի հաւտաք թերեւս որ շատերուն ունեցած քանի մը կտոր հացն անգամ ծախելով պարտքերու հաշւեցին, այդ ամէնուն հակառակ դարձեալ ահագին գումարներ պարտաւոր մնացին խեղճերը, վասնզի նոր տոմարներուն մէջ կ'երևին 14-15 տարւան բաց մնացած հաշիւներ: Ահաւասիկ կառավարական շէնքին այրելուն գաղտնիքը:

Միւսին խստութեամբ գանձելու ձեռնարկեցին նաև զինւորական տուրքերու մնացորդները որ սուլթանին յատուկ իրատէով հրամայած էր երկու տարի յետաձգել մինչև ժողովուրդը քիչ մը կարողութիւն ձեռք բերէ. շնորհք մը որ ծնունդ է ժողովուրդին բացարձակ անկարողութեան և ոչ թէ սուլթանին գթասրտութեանը: Սակայն Օրմանեանը շատ տկար գտնւած է թիւրքական քաղաքականութիւնը ուսումնասիրելուն մէջ, և շատ աճապարած այդ գթասրտութիւնը փառաբանելու: Սրբազանը չի գիտեր թէ խաղալիք դարձած է կառավարութեան, վասնզի վերջինս կը պատրաստէ արդէն նոր ցուցակ մը զինւորական տուրքերը խստիւ գանձելու համար. մինչև որ Օրմանեան վեց ամիս աշխատութեամբ շնորհք մըն ալ ընդունի, պայմանաժամը արդէն շատոնց լրացած պիտի ըլլայ մինչև այն ատեն:

*

Սեբաստիայի նահանգական կառավարութիւնը նոր քաղաքականութիւն մը ձեռք առած է ժողովրդին բարոյական ուժը տկարացնելու համար: Մինչև օրս քսանի չափ քիչ-շատ ուսեալ երիտասարդներ միմիայն ուստիկաններու տեղեկագրերու վրայ արսուած են զանազան կողմեր. այնինչ օրէնքով դատարանն է որ կուտայ արքայի վճիռը և այդ վճիռն ալ կեդրոնական դատարանի կողմէն պէտք է հաստատուի. արքայավայրն ալ դարձեալ պիտի որոշէ կեդրոնական դատարանը Ո՞վ է հարցնող-փնտռող:

*

Տեղիս յունաց առաջնորդը կառավարչին և անոր օգնականին անիրաւութիւններուն դէմ բողոքած էր բարձրագոյն իշխանութեան: Անոնք ալ թշնամանալով կարգ մը անտեղի մեղադրանքներով բռնցած հանրագիր մը պատրաստեցին և իրենց ազդեցութեան շնորհիւ ստորագրել տւին քանի մը յոյներու ալ. հանրագիրը գոհունակութիւն կը յայտնէր նաև կառավարչի մասին, ըսելով թէ ասոր օրով երբեք «անախորժ» դէպքեր չեն պատահած: Իտարէի ժողովի անդամ Անդրանիկ Պարոն-վարդեան, որ միանգամայն անգամ է ազգային քաղաքական ժողովին, համոզած է առաջնորդ Սմբատ վարդապետ Սաստեթեանը որ իր ստորագրութիւնն ու կնիքն ալ դնէ այդ հանրագրին տակ: Ձարմանալին այն է որ Սմբատ վարդապետ ինքն ալ քանիցս կառավարչին ապօրինի ընթացքին դէմ բողոքած էր կանխաւ և հիմա «աղայի» մը խելքին հետեւելով հակասութեան մէջ կ'իյնայ: Թողնենք այդ բոլորը. միթէ վարդապետը այնքան ալ չի հասկնար թէ իր այդ արարքով ատելութիւն կը սերմանէ մեր դրացի յոյներու սրտին մէջ...

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԵՆ

19 օգոստոս 1899

Գում-Գաբուի պատրիարքարանը դարձեր է տեսակ մը լրացուցիչ ձիւղ հարցաքննութեան սենեակներուն ու ուստիկանատան:

Հայ մը գուրսէն եկեր է անպատճառ բանտը պիտի երթայ. կամ հոս մէկը «արևի մէջ պտըտեր է», ատոր համար բանտ կը տանին, և այլն: Բանտարկեալը կը քնեն, խորհրդակցները, դաւադրութեան միւս մասնակցողներն ալ գտնելու համար: Աս' ուստիկարութեան պաշտօնն է, իսկ պատրիարքարանն իսկ ինչ քիչ որ չի կրնար իմանար ուստիկանութիւնը՝ բռնակալութեան ներկայացուցիչը, — կ'իմանայ հոգեւորականը՝ կրօնի ներկայացուցիչը: Խեղճ ծնող մը, ողորմելի ազգական մը կը դիմէ պատրիարքարան միջնորդելու իր անմեղ բանտարկեալին համար՝ կ'ենթարկուի խիստ քննութեան, ձիգլիթական ամէնանուրբ հարցումներով, — հարկաւ արգիւնքն ալ կը հաղորդուի կառավարութեան:

*

Այս վերջին ամսւան մէջ առնւալը 120 անձ բանտէն հայրենիք արքորեցին: Աս միայն մեր գիտցածը: Սակաւ չեն նաև երիտասարդ-թիւրք բանտարկեալները և արքայականները: Քասթամունի քշեցին Սլի պէյը, որ մաս-

նաւոր դպրոց կը պահէր և մինչև իսկ «Թիւրքիոյ առաջագիտութեան» մասին գիրք մըն է գրեր. առոր համար է որ բանտի ու քսորի դատապարտեցաւ:

Գաւառներէն եկած հայ վաճառականները՝ ամէնականոնաւոր անցագրերով՝ չեն կրնար Պօլիս մտնել. ապրանք առնել ու երթալ. կուգան, բանտերու մէջ քանի մը շաբաթ կամ ամիս հիւր կ'ըլլան ու ետ կ'երթան: Քիչերը կը յաջողին իրենց գործը տեսնել ու այնպէս վերադառնալ, ան ալ խոշոր կաշառքներով:

*

Գաւառներէն տխուր ձայներ կը լսին: Ասկէ քանի մը օր առաջ ականատես վկաներ հաղորդեցին, որ Բաղէի Յարգգող անուն փուղի վրայ յարձակւեր են քիւրդերը և մաքուր սրբեր տարեր են: Բարեբախտաբար հայերուն բարեկամ ուրիշ աշխրէթ մը եկեր, խլեր է թշնամի աշխրէթէն թալած իրերը և տերերուն դարձուցեր է:

Երզնկայէն եկած նամակները կը հաստատեն, որ քիւրդերը քանի մը հայ վանքեր թալելն են: Իսկ Վարինէն կը գրեն մեզ, որ Քղի մէջ քիւրդ համդիէները մեծամեծ անգթութիւններ կը գործեն — սպանութիւն, կողոպուտ և այլն: Հսկողութիւն, քննութիւն, պատիժ՝ չկայ. նազողն ալ իրենք են, պարողն ալ ինչ եղանակ ուզեն՝ կը նազեն ու կը պարեն:

*

Հայ վարդապետ մը բանտն է հոս, Պօլիս... ան ալ կեդրոնական բանտը: Չկրցանք իմանալ ո՞վ է և ինչո՞ւ համար է բերւած, սա միայն յայտնի է, որ «ազգային գործերու» համար է և Անատոլիէն բերւած: Օրմանեանին աչքերը կը կուրանան, ականջները կը խլանան ասանկ պարագաներու մէջ. չտեսնելու և չլսելու կուտայ...

*

Օգոստոս 15/27-ին Գրիգորիս եպիսկոպոս Ալէքսանդրէան՝ օրինական ընտրեալ կաթողիկոս տանն Նիլիկիոյ՝ կնքեց իր մահականացուն 59 տարեկան հասակին մէջ: Սրբազանը դեռ ևս խիստ ժիր, առողջ ու կենսունակ կ'երեւար. անոր յանկարծակի մահը քիչ մը մտմտութեամբ կը պատճառէ այն անձերուն, որոնք ծանօթ են թրքական «սե սուրճին» տեսակ-տեսակ գործածումներուն: Խոշորկեկ խնդիր մըն է աս և դեռ երկար խնդիր ալ կը մնայ... Երգեօք բնական տկարութենէ՞ մը մեռաւ, թէ Նիլիկիոյ ընտրութիւններու օրերը մտանալուն պատճառով, անոր վերընտրումը տեսնելու խայտառակութենէն ազատելու համար, Օրմանեան փաշան կամ Բ. Դուռը և կամ երկուքը ձեռք-ձեռքի՝ դիմեցին սուլթանական և ճիզլիզական սրբագործեալ միջոցին...

*

Գուժ-գարուի դուրսի եկեղեցու քարոզիչ Եզնիկ եպիսկոպոսին արգիլեցին քարոզել: Արգիլողը կառավարութիւն է, իսկ զրգո՞ղը... Փրանսացիները կ'ըսեն «Cherchez la femme», իսկ Պօլսի հայերս — «Cherchez Ormanian»: Չար լեզուներուն եթէ լսենք, Եզնիկ եպիսկոպոսի քարոզչութիւնէն հեռացնելուն պատճառն ալ Օրմանեանին նախանձն է: Օրմանեան չի կրնար հանդուրժել որ եպիսկոպոս մը գտնուի քիչ մը յարգանքովայեղով:

*

Ահմէդ Ճէլալէդդին փաշան, որ իր գազան պետին հրամանով՝ զրպանները լեցուն ոսկի՝ մեկներ էր Եւրօպա «յեղափոխականները հաւատի բերելու», այն համոզմունքով թէ «ոսկիով բեռնած էջը Հոօմի պարիսպներէն ալ կ'անցնի» — այժմ վերադարձեր է իր ճամբորդութենէն, բաւական առատ հունձքով: Հետը բերեր է 7 հոգի Երիտասարդ-Թիւրքիոյ անդամներէն (երկուքը նախկին զինւորականներ) և մէկ հոգի մըն ալ հայ-յեղափոխական (°): Ժէօն-Թիւրքերու կաշառքով վերադառնալուն այնքան ալ չզարմացանք. իսկ հայրը... Քիչ մը խորհիլ պիտի տար մեզի, եթէ միայն Քէլէկեանին դարձը չփշէինք, ան ալ իբր «յեղափոխական» ետ բերւեցաւ այն ատեն... Ինչպէս կը լսենք, փաշային այս ճամբորդութիւնը բաւական սուղի նստած է պետական գատարկ գանձարանին:

*

Յամառ կերպով լուր մը կը շրջի կառավարութեան և զեսպանատներու շրջանին մէջ թէ 4 յեղափոխականներ եկեր են արտասահմանէն. ատոնցմէ 2-ը բռնւեր են, 2-ը կը փնտուին:

Խեղճ երիտասարդներ. արդեօք ո՞վ են ատոնք, ինչ անմեղ, անփորձ ու անփնաս պատանիներ, որ վերադարձեր են իրենց տուները ու իբր «արտասահմանէն եկած յեղափոխականներ» ձերբակալւած են...

«Քաղաքական շրջանները» հոս խիստ մտադանջ են. 4 հոգու, ան ալ զեկավար ուժերու մէկէն ներս մտնելը չարագուշակ բան մը կը համարուի... Երանի թէ ստոյգ ըլլար...

Ատոր համար է որ լրտեսներու թիւը ալ աւելի շատցուցին, ոստիկանական հսկողութիւնը մինչև անհամութեան հասուցին... Բայց 4 չէ՝ մէկ հատ մըն ալ դուրսէն եկած յեղափոխական չկրցին բռնել:

*

Այս օրերս Բարձրագոյն Դուռը շրջագրով մը դիմեց բոլոր պետութիւններու ներկայացուցիչներուն և խնդրեց, որ պատուիրեն իրենց նաւային ընկերութիւններուն որ ասկէ ետքը կանոնաւոր անցագիր չունեցող հայեր չփոխադրեն Պօլիս կամ Թիւրքիոյ միւս նաւահանգիստները: Այս մասին կարգադրութիւն եղած է արդէն ռուսական, աստրիական, ֆրանսական նաւերու ընկերութիւններուն իրենց կառավարութիւններու կողմէն:

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

ՎԵՑՆՐՈՐԴ ՆԱՄԱՍ

Պետերբուրգ, 9 յուլիս

Հայոց եկեղեցու դէմ՝ լարւող որոգայթը, որի մասին խօսեցի անցեալ նամակում, հետեանք չէ միմիայն քաղաքական դիտումների, այլ և արդիւնք այն ընդհանուր կրօնական անհամբերութեան, որ կազմում է ժամանակակից օրթօդօքս ռուս կառավարութեան յատկանիշը և որը լուսաբանելու համար անհրաժեշտ եմ համարում այս անգամ աւելացնել էլի մի քանի խաղեր:

Գեղեցիկ է Ռուսաստանում Օրինագիւրքը, ինչպէս արդէն մի անգամ ասել եմ: Եթէ թերթէք այդ բազմահատոր ժողովածուն, որի վրայ գլուխ են կոտրել շատ պետական մարդիկ, դուք չէք զժառանայ համոզւելու, որ դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ ուղղակի արձագանգ արեւմտեան Եւրոպայի իրաւական ամենահամակրելի հասկացողութիւնների: Մի տարբերութիւն միայն կայ — այն, որ արեւմուտքում նա գրւած է գործադրւելու համար, իսկ Ռուսաստանում՝ միայն ձեռի համար: Եթէ մեզաւոր չեն կազմողները, մեզաւոր են ուրեմն գործադրողները, տասնեակ հազարաւոր չին օվնիկներն են այն հսկայական խումբը, որ այսօր ներկայացնում է ռուս բիւրօկրատիայի մարմինը և որ յարմար և անյարմար դէպքում, ինչպէս պօլսեցիներն ասում են, յինչ-ինչ նկատումներով, ծալում, մի կողմէն է դնում օրէնքը և գրպանից հանում մի նոր, թեւ չգրւած, բայց գործադիր օրէնք, յինտրուկցիա (հրահանգ) անւան տակ, որ սխալած չէք լինի, եթէ անւանէք բիւրօկրատիայի օրէնք:

Այսպէս, օրինակ, պետական հիմնական օրէնքով Ռուսաստանը ընդունում է կրօնի ազատութիւն և բոլոր դաւանութիւնների հաւասարութիւն օրէնքի առաջ: Բայց այդ հիմնական օրէնքին յաջորդում են անթիւ բացառութիւններ, մեկնաբանութիւններ, յցիբկուլեարներ, պետական խորհրդի կամ մինիստրական բացատրութիւններ, որոնց արդիւնքը այն է, որ այսօր Ռուսաստանում կայ միայն մէկ առանձնաշնորհաւած եկեղեցի, այն է օրթօդօքս, կամ ինչպէս ընդունւած է ասել՝ յպրափօսլաւնիյ (ուղղափառ) եկեղեցի, որի առաջ միւս բոլոր դաւանութիւնների եկեղեցիները նկատւում են հերձաւածներ, որոնց դէմ կարելի է դաւեր լարել, հալածանքներ գործադրել և նոյն իսկ նրանց գոյութեան դէմ խաղեր խաղալ:

Գաղտնիք չէ ոչ ոքի համար, որ 8(1) տական թւականներից մանաւանդ, երբ կառավարութիւնը իր փրկութեան խարխիւներից մէկը դարձրեց ռուս հոգեւորականութեան նեղհոգի պրօպագանդան և երբ քահանայութիւնից իսկ, Ալեքսանդր III-ի ուղղափառ շրթնութիւնը քննարկեց, ներբողներ սկսեցին կարդացւել ուղղափառութեանը, — ռուսացնող տարրերի համար պրափօսլաւնիյ եկեղեցին զօրացնելու նպատակով բոլոր միջոցները թոյլատրելի դարձան: Ահա այդ ժամանակից է, որ պետութեան բոլոր կողմերում նախ բոլոր նորածիլ դաւանութիւնները, որոնք հաղանդանուն են կրում, ենթարկւեցին մի միջնադարեան բառի, բուն մտքով ինկւիզիցիական հալածանքի, և յետոյ՝ բոլոր միւս դաւանութիւնները — կաթօլիկ, բողոքական և մանաւանդ հայ լուսաւորչական եկեղեցիները, քիչ-քիչ սկսեցին նոր յկառավարչական կարգադրութիւնների՝ կամ ուրիշ խօսքով՝ ճնշումների առարկայ դառնալ:

Եթէ ճշմարիտ եւրօպացիները միջոց ունենային տեսնելու այն բոլորը, ինչ որ ռուս բիւրօկրատիան ռուս հոգեւորականութեան հետ միասին, ձեռք ձեռքի տւած, այսօր գործ են դնում, օրինակ, դուխօբօրների, մալականների, սուբբօտնիկների, շտունգիստների և այլ աղանդաւորների վերաբերմամբ, — նրանց՝ մազերը բիզ-բիզ կը կանգնէին: Մենք չունենք ազատ մամուլ, որ փաստերը երեւան հանէր. իսկ եւրօպական մամուլը այնքան

քիչ է հետաքրքրւում Ռուսաստանի ներքին գործերով և այնքան քիչ տեղեկութիւն ունի դրանց մասին, որ մարդ յուսահատւում է մտածելով՝ թէ գալու է արդեօք մի օր, որ աշկարայ անող լոյսը թափանցէր այս անծայր պետութեան խորքերը, երեւան հանելու այն սոսկալի, անպատմելի փաստերը, որ կազմում են 19-րդ դարի ռուսական ինկւիզիցիայի նորագոյն պատմութիւնը:

Անցեալ տարի անդրկովկասեան դուխօբօրների աղետալ ողբի խուլ հնչիւնները հասան մինչև Եւրօպա, բայց դա նահատակ աղանդաւորների վշտերի փշթանքն էր միայն: Եւ գիտէք, ի՞նչ է դուխօբօրների առաջին ու վերջին յանցանքը. — այն, որ նրանք ուղղափառ չեն: Աշխատասէր, տոկուն մի համայնք, հեռու արեւոյթիւնից ու անբարոյականութիւնից, ոգևորւած քրիստոնէական վառ սիրով դէպի ընկերը, սիրահար համայնական կան կենցաղի, թշնամի բռնութեան և զէնքի, դուխօբօրները շէն են դարձնում ամէն մի աւերակ, ուր ոտք են դնում, և սակայն, չնայած դրան, նրանց տները քար ու քանդ արին, հողերը խլեցին, կապկների մտրակին յանձնեցին նրանց մէջքը և անասնական կրքերին նրանց կանանց ու աղջիկներին, և վերջն էլ մի քանի հազար հոգի տնուղակի ճանապարհով դուրս վռնտեցին Ռուսաստանից — նրանք գաղթեցին Վիպրոս և Ամերիկա — որպէսզի նրանց վնասակար վարդապետութիւնից ազատ պահեն ուղղափառ ռուս գիւղացիներին, օրթօդօքս բիւրօկրատիայի շահատակութիւնների այս անբան և անխօս յնահատակներին:

Եւ դա է, որ ժամանակակից Ռուսաստանում կոչւում է կրօնի ազատութիւն և բոլոր դաւանութիւնների հաւասարութիւն օրէնքի առաջ:

Ես մեծ հաճոյքով երբ յարմար առիթը ներկայանայ, մի առանձին նամակ կը նւերեմ յդուխօբօրների հարցին. այդ պատճառով թոյլ տւեք ինձ այս անգամ կանգ չառնել այդ հալածական համայնքի վրայ, որ այսօր ամէն տեղ գրկաբաց հիւրասիրութիւն է գլտնում, բացի անհիւրընկալ հայրենիքից: Ես կանգ չեմ առնի նոյնպէս և այն յկառավարչական կարգադրութիւնների՝ վրայ, որոնք վերաբերում են կաթօլիկ և բողոքական եկեղեցիներին Ռուսաստանում, և կը բաւականանամ յիշատակելով մի քանի գծեր, որոնք ուղղակի վերաբերում են հայոց եկեղեցուն:

Ահա փաստեր:

I. Վովկասում գոյութիւն ունի յուղղափառ քրիստոնէութիւն տարածող ընկերութիւն, որ ամէն տարի գանձարանից ահագին գումարներ է ստանում իր նպատակին հասնելու համար: Եւ եթէ կարծում էք, թէ այդ նպատակը նրա մէջ է կայանում, որ ընկերութիւնը քրիստոնէութեան է դարձնում դաղստանցի մի լեռնականի կամ աւազակաբարոյ մի թիւրքմէնի և կամ պատրաստւում է, ինչպէս շատ եւրօպացի միսիօնարներ, իր անգամներին ուղարկելու Վարսկաստան, Աւղանիստան, կամ հեռաւոր Զինաստան, — չարաչար սխալւում եք: Ընկերութեան տւած գաղտնի հրահանգներից երեւում է, որ նրա գլխաւոր նպատակն է՝ հայ լուսաւորչականին ուղղափառ դարձնել, և չէք կարող երեւակայել թէ ինչ մեծ յաղթութիւն է համարւում այդ քրիստոնէական ընկերութեան համար՝ քրիս-

տ ո ն ե ա յ-հային ք ժ ի ս տ ո ն ե ա յ-ուղղափառ դարձ-
նելը: Այդտեղ, իհարկէ, մեծ դեր են խաղում՝ քաղա-
քական նպատակները, և այդ պատճառով ընկերու-
թեան աջակցում են ոչ միայն ուսու հոգեւորականներ,
այլ նոյնիսկ կառավարչական մարդիկ, ինչպէս, օրինակ,
նահանգապետ, գաւառապետներ ևայլն: Դուրս է գալիս
ուրեմն, որ կովկասցի հայը կամ թիւրքը, իբր հպա-
տակ, հարկ է տալիս գանձարանին, իսկ գանձարանը
փոխանակ այդ փողը գործադրելու դպրոցի, հաղորդակ-
ցութեան ճանապարհի կամ երկրի ապահովութեան
վրայ, տալիս է ուղղափառութիւն տարածող մի ընկե-
րութեան, ուրիշ խօսքով՝ հայը կամ թիւրքը ինքը իր
փողով՝ նպաստում է իր կրօնափոխութեան: Եթէ ու-
զում էք, դա մի արտուրդ է. բայց ինչ կայ զարմա-
նալու, քանի որ մեր պետական-վարչական կեանքի մէջ
այսպիսի արտուրդներ անթիւ են և անբաւ...

Հարունակեցէք լսել, ընթերցող:

Գեներալ Հալիկով, Երևանում նահանգապետ եղած
ժամանակ, մոռանալով, որ ինքը ամբողջ նահանգի կա-
ռավարիչ է և ոչ թէ մի միսիօնար, իր գործա-
կալների միջոցով յայտնում էր հայ գիւղացիներին,
որոնք խորովում էին հողի պակասութիւնից, թէ այն
գիւղերը կամ գիւղացիները, որոնք ուղղափառութիւն
կ'ընդունեն, իսկոյն նոր հողեր կըստանան: Այդ գործա-
կալները մեծ մեծ խոստումներ էին անում, յաւիտենա-
կան ապահովութիւն էին խոստանում աղքատ գիւղա-
ցիներին: Եւ երբ Սուրմալուի գաւառում գտնեցին մի
քանի գիւղեր, ինչպէս՝ Խալֆալու, Կողբ, ուր հայերը
հողի համար իրենց կրօնը փոխեցին, միսիօնար-նահան-
գապետը իր խոստումն անգամ չկատարեց, որովհետեւ
յով մի անգամ արգէն ուղղափառ դարձաւ, իրաւունք
չունի նորից իր նախկին կրօնին դառնալու: Հակառակ
դէպքում նրա տեղը գիւղը չէ, այլ Սիբիր...

Եւ դարձեալ լսեցէք, ընթերցող:

Միայն սակաւահող գիւղը չէ այդ պրօպագանդայի
առարկան, այլ և շղթայակապ բանտերը: Սրանից մօտ
10 տարի առաջ Երևանի բանտը բաց էր մի ուղղա-
փառ քահանայի համար, որ ամէն օր ներս էր թափան-
ցում բանտարկեալների խոցերը և քարոզում հայ գիւ-
ղացի բանտարկեալներին, որ եթէ ուզում են Սիբիրից ա-
զատուել, իրենց յոյսը պէտք է դնեն ոչ թէ իրենց ան-
մեղութեան կամ փաստաբանի վրայ, այլ միմիայն ուղ-
ղափառութեան վրայ: Ուղղափառ եղէք, հաւատա-
ցնում էր քարոզիչ-քահանան, և դուք Սիբիր գնալու
փոխարէն՝ կը դառնաք ձեր ընտանիքի գիրկը: Միա-
միտներից շատերը հաւատացին, փոխեցին իրենց կրօնը,
բայց և այնպէս փոխանակ իրենց երեխաներին և կա-
նանց գրկելու, մինչև այժմ էլ Սիբիրի հողն են ողո-
ղում իրենց արտասուքներով...

Եթէ ձեր ջղերը, իմ դժբախտ ընթերցողներ, բաւա-
կանաչափ ամուր են, լսեցէք և այս փաստը:

Ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ մի հարուստ
հայ վաճառական կառավարչական կապալ է վերցնում,
գրաւ դնելով մի մեծ գումար: Ապալը անյաջող է
գնում, ու նա կորցնում է իր ամբողջ կարողութիւնը, և,
ինչպէս ասում են, անարդար կերպով՝ վաճառականը
յոյսը դնում է գրաւ դրած գումարի վրայ և աշխա-
տում է գոնէ այդ յետ ստանալ: Նրան ասում են.
«Հաւանօրէն յետ կրստանաք, եթէ միայն ուղղափա-

ռութիւն ընդունէք և աշխատէք, որ ուրիշներն էլ
ձեզ հետեւեն»: Դժբախտը համաձայնում է: Սակայն
գումարը յետ չէ արւում: Դուք հետեւողներ չունե-
ցաք. նոյնիսկ ձեր ընտանիքի անդամները չհետեւցին
ձեր օրինակին, ասում են նրան յանդիմանօրէն և
ճանապարհ գցում... Թշուառը մեռաւ աղքատութեան
մէջ, ատաճ բոլորից, նոյնիսկ կնոջից և հարապատ զա-
ւակներից...

Զգուշ և ցնցող են բազմաթիւ փաստերից վերցրած
այս դէպքերը — այնպէս չէ: Եւ զգուշ մանաւանդ
այն պատճառով, որ այդ տեսակ «գործունէութեան» հե-
ղինակները ազատ միսիօնարներ, միսիօնարական խմբեր
չեն, որոնց գործունէութեան համար, տարաբախտաբար,
մեր կիսակրօնական դարը դեռ բաւական պարարտ հող
է ներկայացնում, այլ կառավարութեան պաշտօնեաներ,
պետական ծառայողներ, որոնք կոչւած են հոգալու
հայապատկանների բարեկեցութիւնը, անկախ նրանց կրօ-
նական համոզմունքներից...

Առջ գնանք:

II. Կ Ր Օ Ն Ի դ ա ս ա տ ու թ իւ նը պետական
դպրոցներում մի երկրորդ և զօրեղ ապացոյց է այդ ան-
համբերութեան: Պօքեդօնօսցեմի ձեռքում գտնուող կա-
ռավարութիւնը, որ ոչինչ ջանք և փող չի խնայում «ուղ-
ղափառ կրօնի» դասերը դպրոցների մէջ շատացնելու
համար, ամէն ջանք գործ է գնում խափանելու օտար
գաւառութիւնների դասատուութիւնը նոյն դպրոցներում:
«Ուղղափառ» կրօնի վերաբերմամբ կառավարութիւնը
մոլեռանդ-կրօնամոլ է, իսկ «օտար կրօնների» վերա-
բերմամբ — անաստեղծ: Այն, ինչ նա անհրաժեշտ է հա-
մարում օրթօդօքս պատանիների համար, միանգամայն
աւելորդ է գտնում, օրինակ, հայ պատանիների համար:
Եւ եթէ կամենում էք, գիմնազիաներում, իրօք, հայ
աղջիկներ և տղաները կրօն չեն սովորում — մի փաստ,
որ կարող է ուրախացնել անաստեղծներին և այն մարդ-
կանց, որոնք դէմ են կրօնի, իբրեւ մի առարկայի դա-
ստաւութեան, բայց ոչ ուսուց կառավարութիւնը, որ
մեծ յոյս է դրել կղերի աջակցութեան վրայ:

Հայոց լեզուն իսկապէս վաղուց արգէն հանւած է
գիմնազիաներում և քաղաքային դպրոցներում՝ պար-
տաւորեց ու ցիւցիչ առարկաների ցանկից, որովհետեւ
մեր «պետական գլուխների» դատողութեամբ, հայը
աշխարհիս երեսին երկու պարտաւորութիւն միայն
ունի — մէկը՝ սովորել ուսուց լեզուն, իսկ միւսը՝ ա-
տել իր մայրենի լեզուն: Եւ մէկը այնքան անհրաժեշտ
է, որքան միւսը: Այժմ՝ քիչ-քիչ այդ երկու պարտա-
ւորութիւններին աւելանում է և մի նորը — խորշել
այն կրօնի դասերից, որ տանը դաւանում են նրա ծնող-
ները և անւանապէս ինքը, բայց որին ծանօթ լինել,
մեր այժմեան «պօլիտիկան-մանկավարժների» կարծիքով
ոչ միայն պէտք չէ, այլ և աւելորդ: Տեղն է յիշել իմ
ծանօթ բնագէտի խօսքերը. «Մենք, բնագէտներս, չենք,
որ այժմ անկրօնութիւն երբ սովորեցնում երեխաներին,
այլ կառավարութիւնը, որ կրօնի մէջ էլ պօլիտիկա
է մտցնում»...

Մօտ 10 տարի կը լինի արգէն, որ, հայ երեխաներին
իրենց եկեղեցու դաւանութիւնից և կրօնից սառեցնելու
յոյսով, զանազան դիւրեկտօրներ և ինսպեկ-
տօրներ, ամաչելով աշխարայ կերպով վերացնել
կրօնի դասերը, թող չեն տալիս, որ կրօնի դասերը

յանձնեն քիչ-շատ ընդունակ և օրինաւոր հոգեւորականներ, այլ ընդունում են այնպիսի դաստառութեաններ, որոնք իրենց մի քանի ուղղութիւններ համար, այլ և շնորհիւ իրենց ստրկահոգի բնաւորութեան, ոչ միայն իսկապէս կրօն չեն աւանդում հոյ աշակերտներին, այլ պատրաստ են նոյնիսկ իրենց եկեղեցու կարգերը կեղծել միայն թէ դուր գան իրենց «իշխանաւորներին»: Եւ ահա այսօր, շնորհիւ այդ հանգամանքների, լուսաւորչական կրօնի դասերը չեն հետաքրքրում հայ երեխաներին, իսկ շատերը նոյնիսկ պարծենում են իրենց արհամարհանքով դէպի այդ դասերը... Զարմանալի ոչինչ չկայ ուրեմն, որ պետական դպրոցները աւարտող հայ պատանիները նոյնիսկ հասարակ աղօթքներ չեն սովորում ու կրօնից ձեռք են բերում այնքան տեղեկութիւններ, որքան չինացոց լեզուից, թէ և կրօնը, իբրեւ առարկայ, պետական բոլոր դպրոցներում առաջնակարգ տեղ է բռնում և վկայագրերի մէջ բազմեցրած է բոլոր առարկաներից վերեւ, ամէնքի ճակատին...

Եւ այս բոլոր այլանդակ, քարշելի խաղերը միայն նրա համար են, որ ճանապարհ բաց անեն օրթոդոքս եկեղեցու համար. բայց վայ այն կառավարութեան, որ իր յոյսը դրել է եկեղեցու վրայ:

Մի գիծ ևս:

III. Երգման հարցը, որ կովկասում 10-15 տարուց ի վեր «հրատապ հարցերից» մէկն է, լրացնում է այն հալածասէր քաղաքականութիւնը, որ սկսած էր հայոց լեզուի և եկեղեցու դէմ: Դատաստանական հիմնարկութիւնների մէջ դա մի անբուժելի ցաւ է դարձել: Քառորդ դարից ի վեր դատարաններում ամէն-մի դաւանութեան պատկանողին, հարկաւոր դէպքում, երդւեցնում էին իր կրօնի ծէսերի համաձայն, իր մայրենի լեզուով, թուրքին՝ թուրք մօլլան թուրքերէն լեզուով, հային՝ հայ քահանան հայերէն, ռուսին՝ ռուս քահանան ռուսերէն լեզուով և այլն: Բայց ինչպէս երեւում է այդ տարրական արդարութիւնը շատ «լայն» թւաց, ռուսացման սիրահարներին: «Ինչ հայերէն, ինչ հայոց քահանայ—մտածեցին մի օր,— Ռուսաստանում միայն մի լեզու կայ և մի իշխանութիւն»: Եւ ահա այդ օրից սկսեցին տխուր տեսարաններ դատաստանական դահլիճներում. — հային ստիպում են երդուել ռուսաց լեզուով. շատ անգամ աւելորդ են համարում հրաւիրել հայ քահանայ, երդուեցնում է ինքը դատարանի աշխարհական-նախագահը, մի խօսքով բաշխելով ու լուծելով թիւններ, որոնց մասին լսելը անգամ զգուշ է պատճառում...

Եթէ մի օր մի հայ, մի վրացի կամ մի թուրք համարձակւի ասել. «Ես չեմ ընդունում կրօնական երդում: Վերցրէք ինձանից քաղաքացիական երդում» — նրան կը նկատեն իբրեւ վտանգաւոր լիբերալ և ով գիտէ ո՛ր կը քշեն... Ինչո՞ւ: Արդիւհտեւ Ռուսաստանում միայն կրօնական երդումն է ընդունւած: Սակայն երբ նոյն հայը ուզում է նոյն կրօնական երդումը տալ իր կրօնական ծէսով, համաձայն իր եկեղեցու դաւանութեան, նրան ասում են. «Այդ աւելորդ է. քեզ կարող է երդուեցնել քահանայի փոխարէն և աշխարհական-չինովի, փոխանակ հայերէնի, մի այլ լեզուով փոխանակ հայոց եկեղեցու ծիսով, որ և է այլ ծիսով, թէ և հայը չի էլ հաւատում ոչ այս նոր

ծէսերին, ոչ էլ նոր-երդեցնողի հոգեւոր հեղինակութեան: Ո՛ւր մնաց ուրեմն կրօնական երդումը և այն հաւատը, որ դրած է այդ տեսակ ամէն մի երդման հիմքում... Լօգիկան այդ հարցին պատասխան տալ չի կարող. դրա պատասխանը ստանալու համար պէտք է դիմել «ռուսացման» հերոսներին, որոնք եթէ անկեղծ լինեն, պէտք է ասեն. «Մեզ համար երդումն էլ, դպրոցն էլ լեզուն էլ, կրօնն էլ, ինքը ուղղափառ Աստուծոն էլ մէկ նպատակի միայն պիտի ծառայեն — մի ապտուղ թեւան և ուղղափառութեան. դրանից դուրս չկայ մեզ համար ոչ արդարութիւն և ոչ էլ իրաւունք»:

Հին-հին դարերին յատուկ այդ ամօթալի հալածանքը ժամանակակից Ռուսաստանում դարձել է անբան սովորական, որ այժմ, ինչպէս ասում են, տեղից վերկացողը, յանուն «ռուսացման», հայհոյում է հային, վրացուն, լէհին, ֆիններին... հայհոյում են դպրոցական ամբիոնից, դատաստանական բազկաթոռից, լրագրերի էջերից, նոյնիսկ եկեղեցու բեմից... Սկսած է ազգերի մի խուլ սպառնական ատելութիւն, որ եթէ մի օր պայթի, սոսկալի կայծեր կարող է ցայտեցնել...

Վտանգաւոր ապագայ...

Գուցէ, այդ ապագայ վտանգն էր պատճառը, որ սրանից մի երկու տարի առաջ, 1897 թւին, Պետերբուրգի գրական մի շրջանից, որի գլխին կանգնած էր իշխան Էսպեր Ախտոմսկի, սկսեցին հնչել կրօնական համարներ ողորթ իւր և դաւանութիւնների հաւասարութիւն գեղեցիկ խօսքերը: Շատերը սկսեցին յոյսեր տածել, որովհետեւ գիտէին, որ իշխան Ախտոմսկին, որ այդ ժամանակ յանձն էր առել «Պետերբուրգսկիա Վեդոմօստի»-ի խմբագրապետի պաշտօնը, անձամբ շատ մօտ է կայսրին և վաղուց վայելում է նրա կատարեալ վստահութիւնը և բարեկամութիւնը: Նոյն իշխան Ախտոմսկին էր, որ երբ այժմեան կայսրը, իբր թագաժառանգ, ճանապարհորդում էր Արեւելքում, ուղեկցեց նրան և գրեց այդ ճանապարհորդութեան պատմութիւնը: Իշխան Ախտոմսկին — մի համակրելի հրապարակաբան — իր ընկերներով բուռն բողոք բարձրացրեց այն միջնադարեան հալածանքի դէմ, որ յանուն ռուսացման սկսած է միւս կրօնների և լեզուների դէմ: Նա պաշտպան հանգիստացաւ լեհացիների և հայերի, մնալով իհարկէ, նաեւ շատ լաւ ռուս:

Սակայն այդ ժամանակ թէ յետագէմ ռուս մամուլի մէջ, թէ թուած բիւրօկրատիայի շրջանում այնպիսի աննկարագրելի դժգոհութիւն բարձրացաւ, այնպիսի քաղցր լուսեցին փչել, որ կարելի էր կարծել թէ «կրօնական համբերողութիւնը» Ռուսաստանի գոյութեան վտանգ է սպառնում, և հետեւանքը այն եղաւ, որ մի քանի ամիս հազիւ անցած, իշխան Ախտոմսկին լուցւ. վայր դրեց իր գրիչը, տեղի տեց, և այժմ փոխանակ գաղափարի զինուոր լինելու, զանազան պաշտօնական յանձնարարութիւններ է կատարում — յանձնարարութիւններ, որոնց համար բնաւ կարիք չկայ ունենալու նրա խելքը և համակրելի յատկութիւնները...

Ամէնազօր և ամէն ինչ իր խելիքի ճանկերի մէջ առած բիւրօկրատիան էր, որ յուզեց Պետերբուրգի կառավարչական «յայտնի» շրջանները և ստիպեց լուծել այդ «ազատամիտ» ձայները, թէ և այդ ձայները վայելում են նոյնիսկ թագաւոր-կայսրի անձնական վստահու-

Թիւնը և մինչև անգամ խորախուսանքը... Ի՛նչ նշանակութիւն ունի մի ան ձը, երբ դարեւոր օլիգարխիան այլ կերպ է ուզում...

Տեղն է այստեղ յիշել մի անեկգօտ, որ շատ է տարածւած մայրաքաղաքում: Բանակուի տաք ժամանակը — պատմում են — իշխան Ուխտոսէին գրեց մի յօդւած, որ խմբագրեց ինքը կայսրը, պաշտպանելով կրօնների ազատութիւնը և ազգերի հաւասարութեան տեսակէտը: Երբ յօդւածը արդէն պատրաստ էր և միւս օրը պիտի յանձնէր տպագրութեան, կայսրը հարցրեց.

— Կակ վի գումարտի, կնեազ, զա էտօ նաա նե նակաժուտ (Ի՛նչ էք կարծում, իշխան, սրա համար մեզ չեն պատփի):

— ? ...

Դա, իհարկէ, իրականութիւն է, բայց եթէ կայսրը արտասանէր այդ խօսքերը, նա ճշմարտութիւնից շատ էլ հեռացած չէր լինի: — Ահա այսպէս են դատում մայրաքաղաքի շրջաններում և այդ նպատակով էլ հնարել են այդ սրամիտ անեկգօտը...

Ի. ԱԿՆՈՒՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԿԻՈՅ ԸՈՒՐՁԸ

ՄՈՒՐԱՊ ՊԷՅ. Եւրօպական լրագրերուն մէջ գրեցաւ թէ Մուրադ պէյ սկսեց է մատնութիւններ ընել:

Մեր զարմանքը պիտի զար եթէ հակառակը պատահէր. այսինքն չմտնեցու մէջ րտութիւնը ունենար:

Ի՛նչ սպասել սոփիստ մարդէ մը որ ֆարքի պէս անմարտութիւններու վրայէն սողալով, գետնը պազնելով, գնաց մինչև Երուսաղէմի զահն առջեւ, Մեծ մարդասպանին ոտքերը լայլու:

Սօկրատի «հեղեղ» անգոր էր այդ պզտիկ սրտով մարդը կոսեցնել իր համբաւաւոր ուխտագնացութեան մէջ:

Այս անմարտիկ և դրոժ «փախտաւոր» որ փուտ փաշայի երազած «յանդուզն քարնտրոգի»-ը ըլլալու յիմարութենէն բռնւած էր, ժամանակ մը սուլթանին դէմ ծիհատ ևր քարոզէր: Օսմանեան գրականութեան էն պահին, մեղամարտունեքներն ու շրջաբանութիւնները թուրք կրտսէին իր գրչին տակ արիւնարբու խալիֆային անունը խաղք ընդլու ու անմասնացնելու համար: Իր պարսաւազերը քանաստեղծական ոտշտութիւնով մըն ալ ծիրանաւորւած էին:

Եւրօպայի մէջ, իբր հալածական «յիւրեսաց սուլթանին», իր ծէնութիւնի սիւլէտը երկար ատեն պտըտցուց. ինքզինք ներկայացնելով օսմանեան կայսրութեան ապագայ իդէալի անվեցներ անոյնանը, և իբր նմոյշ մը Երիտասարդ Թիւրքիոյ նոյակապ և թարմութեան մտքին: Երեւելի քաւական շան կտրտեց: Միամիտ Եւրօպան հաւտաց տեսնել անոր մէջ Միդհատ փաշա մը, եթէ ոչ... Մէհմեդ մը, միջնդեւ աշուղի Փիւմիստ (սուտուտ) մըն էր:

Շատ շուտեց այդ կատակերգութիւնը, դարավերջիկ Թիւրքիոյ այդ ինքնակոչ ներկայացուցիչը ապահարգան ընաւ իր որդեգրած ու խելքը չհասած համետ սկզբունքներուն հետ... սուլթանին հետ կարգելու համար: Անճարակին պատկը... Բարի վայելու:

Մուրադ պէյ իբրեւ հանրային գործիչ և մարդ սովորական մակարդակէն ալ շատ վար է. վերջին ծայր փառասէր ու գոհիկ գաղափարներու տէր մէկը: Անոր էֆէնդիական շիք, լուրջ ու արեւելեան դանդաղ շարժումներուն տակ արիւնի մարդը կայ, մինչև հոգուն տունը անբուժելի մոլեռանդութիւնով մը պլշւած. համախառնութեան անճոռնի ու տխուր մանիէն բռնւած կապելու գիծ մը, որ իրաւ իրաւի կը հաւտայ թէ Թիւրքիոյ փրկութիւնը մոլեռանդութեան պահպանումին մէջ է, որուն առջեւ հայրենասիրական բուն թափով մը կը խոնարհեցնէ մինչև անգամ Եւրօպան:

Միմակ համոզը չէ որ երկրին միլիոնները ծովը կը նետէ համախառնութեան և ուրիշ իւրօպական էշութիւններու հա-

մար — այդ գումարներով եթէ ուզենար, երկրին քարոյական տրամադրութիւնը կարող էր լացնել:

Երիտասարդ Թիւրքերուն մէկ մասը — որը գաւառացիք «կալուղ փուշեք» կ'անւանեն — համախառնութեան կէտին վրայ համամիտ են իրենց սուլթանին հետ. ատոր համար այդ մարդիկը իրենց ներքին գործունէութեանը մէջ որոշ արեւելակողմ մը շարժում գտնել տալուտուտ, աշխարհային հազարուէկ փորձութիւններու ենթակայ, չեն ներշնչեր այն մարդը ու անկասկած հաւատքը, որ ամէն իդէալի ներսւած մարդը քնազդաքար իրար կը մօտեցնէ կամ Գէօթի «քնտրական համակրութիւնը» կըստեղծէ:

Հակառակ իր քուրք քարի ցանկութիւններուն հայ յնդափոխութիւնը Մուրադ պէյի պէս քէօլէն երուն վրայ լուի շափ հաւատք չէ ունեցած. երբ քարծրանալ ուզեն կամ վար կ'իյնան մէջքերնին կը կոտրեն կամ ուրիշ գլուխը կը պատռեն: Ո՛րք են Ալի Սաատիի պէս մարդեր, որոնք Երուսաղէմ քաղաքի հերոսութիւնը ունենան:

Չմոռնանք ըսել որ մեծ անուն Մուրադը «Թիւրքիոյ ուժը և տկարութիւնը» անուն գրքով մըն ալ հեղինակեց Եւրօպա եղած ատեն, ուր կը ջանայ հաւտացնել թէ Թիւրքիան աշխարհի էն ամուր ու անսասան պետութիւնն է, ալ անմահ է ան, եթէ... աստուածները չնախանձին անոր մեծութեան, «Տաղար Թաշար տայանամազ»...

Բայց... Մուրադ պէյի մինչև գալոց «Քրիստոս պիտի մնան տօգոյն հոգիներ, դաւաճաններ ու... մարդասպանութիւն քարոզողներ: Մարդկային քարծր զգացումները անոնց քոստ աշքերուն համար շատ քարծր և լուսաշող են: Ատանկները արեւելեան մայլ ու խորհրդաւոր սէր աշխարհու համար նախաասանւում մանկութիւնը են, որոնց ամէն պատուամանաշ մարդ անարգօրէն թո՛ւ կ'ընէ երեմուռն ու կ'անցնի:

Չօ, եթէ Մուրադի պէս շագանկներուն մասց Թիւրքիոյ քարիտորոգութիւնը... «2օք եաշա համոզ»:

* *

Միւս կողմէն Ամէդ Ճէլալդիին փաշան — շուրջ սուլթանին որ իր կարգին շուրջ է ալլաին — Եւրօպա եկեր է նորէն 30,000 արշաւուսի պէս ոսկիներով, որպէսզի Երիտասարդ-Թիւրք անունին տակ թաքնւած կարգ մը քախտախնդիրներ աճուրդի հանէ... գերոհներու պէս: Միդհատի այդ ծուտերէն ութ հոգի արդէն հարմուրիի պէս հինաւաճ, ծամբոտներ են դէպի Վօսփօր ուր «կեանքն է միշտ ինդութիւն»: Ճէլալդիինի վարդապետութիւնով ծշմարիտ միսիւլմանին շի վայելք թափառայած ման գաւ, երբ իրենց սուլթանը այնքան հոգածու է և այնքան վեհանմոն կատարութիւնով մը շարքուքուրը կ'ընէ կեամբները, որպէս զի Թիւրքերուն լայն տեղ քացի...

Այդ փերուշան ազատամիտները այդքան փիլիսոփայօրէն չմտածեն թերեւ, բայց երբ փողի ծայն լսեն աշխարհը կը կը մթնէ վրանին, և Վօսփօրը այն ատեն... սկզբնական մեղքին շափ հրապուրիչ կուգայ իրենց:

Ամէդ փաշան սուլթանին քրտեսապետն է Թիւրքիոյ մէջ ստակից պտուտաւոր պաշտօն չկայ քացի ներքինութենէ թերեւ — և տարին քանի մը հեղ, Մակեդոնիոյ թագաւորին շորին պէս ոսկիով բռնաւորւած, Եւրօպա արշաւանք կ'ընէ երբեմն թաթար հրոսակներուն աւերածութեան ասպարէզն էր Եւրօպան. այժմ սուլթանին ոսկիները քարոյական աւերակ կը սփռեն քաղաքակիրթ Եւրօպայի մէջ — ուր ափստով կը քաղէ այդ սուտ վարսալները և կը խրկէ Պօլիս: Իրողինէսի լապտերին պէտք չունի անոնք փնտռել գտնելու համար: Ատոնք կ'երթան, շքե ուրիշ կարաւան մը կուգայ տեղերնին. Եւրօպան ալ չրի ծածրայ է իրենց համար. ո՛չ սուլթանին վեհանմոնութիւնը կը հատնի, ոչ ալ ատոնց նման «ազատ ափս» Թիւրքերու «ելիցն» ու վերաշարքը: Նարծեւ Ալաքա կ'երթան կ'ուգան:

* *

ՌԻՉԱ ՊԷՅ. «Մէշվէթէթ»-ի խմբագիրը Երիտասարդ-Թիւրքերու կողմէ լահէ գացած էր «Խաղաղութեան համաժողովին» յիշատակագիր մը մատուցանելու համար, որուն մէջ իրենց ցաւերը լալէ ետքը, մեղայ ա մէն ասուրքի պէս պզտիկ ապաշխարանք մըն ալ կ'ընէ ըսելով, թէ իրենց յնդափոխականներ չեն. և կը ինդրէ ժողովէն որ արդարութեան անունով, օսմանեան կայսրութեան մէջ գոյութիւն ունեցող օրէնքները, որոնք անգործադրելի մնացած են, գործ դնել տան:

Ազոխը պապերն են կերեր, Ռիզայի ակնան է անք:

Խմբագրականի մը մէջ Ռիզա պէյ աւելի վճիտ է. «Մենք երբեք չենք ուզած յնդափոխութիւն քարոզել. անոր օգտակարութիւնը չիմանալու չէ, հապա, օտարը պիտի օգտէր անկէ և Թիւրքիոյ ապագան պիտի վտանգէր»:

Սուլթան համոզ ինքնացնորի պէս շատոնց է այդ անմաս, ու անմեղ մարդուն փէշին վրայ ինկեր կը հալածէ. քննէ նում

հում պիտի ունենա: Խնդր Ռիզան դեմոկրատիական կուտայ, կարծես հայերը հալածող խնդրն է իր հոտեւէն վազողը:

Վերջին թիւը Նորվեգիոյ մէջ այս տեսակէ, իրենի հայրենիքը, գուցէ հասկնալու համար համիդին ղօրտօր Շթօքմանի խօսքը, թէ «միակ մարդը ամենէն ուժոյն է»:

Այդ տարագիր համարին մէջ սա դէմքիւնկան տողերը կան. «Երիտասարդ-թիւրքերու կողմէն իբր հաճի ամեն մըն է քաղքէ քաղաք ման կուգամ, ամէն տեղ պաշտպանելով ու քարոզելով տուրք դատը»: Բիշ մը վարով, «Երիտասարդ-թիւրքիս» կը շանայ կերպարանափոխել ներկայ ուժիմը եւ խորհրդարանի մը աշակցութիւնով երկրին դրութիւնը բարելաւել» (°):

Ընդունալ խօսքեր են. բայց ատոնք բաւական չեն իրերու ընթացքը խախտելու համար եւ ոչ ալ խորհրդարանը պահանջէ մըն է, որուն Ռիզա պէյ տնայալով կը տնայալ:

Կարծէ քիչ մը ծանրանալ Ռիզայի վարդապետութեան վրայ:

Շատ պարզ է, երբ Լեհաստանը, Հայաստանը, Մակեդոնիան եւ այլն, հալածւած, որը ու անբախտ ժողովուրդներ, Եւրոպայի կը դիմեն իրենց արեւը ծծող քնաւորներուն դէմ՝ զանգուելու համար: Այս իրենց արդար քրտունքն է, ինչու որ այս անպիտան մոլորակին վրայ, մարդկային հզօր ծայրէն աւելի մեծ պաշտպան մը չեն գտներ ինչո՞ւր: Երկիրը շատ բարձր է...

Երբ Երիտասարդ-թիւրքիս հալածող ու միանգամայն դժբախտ ժողովրդի մը կողմէն կը դիմէ Եւրոպայի դիւանագիտութեան անոր խնդրը մուրալու համար, քիչ մը խորթ է եւ միանգամայն հակասութեան վերջ է:

Հազաւագէտ է տեսնել որ երկրի մը դժգոհ տարրը իր ուժիմը փոխելու ու վիճակը բարելաւելու համար օտարին, ան ալ ի՞նչ օտարներ զէնքին ու միջամտութեանը դիմէ. ազգի մը արժանապատուութիւնը մէջ խաղալէն զատ ոչ նազ դաւաճանութիւն է նաեւ: Ազգ մը գլուխը կորսնցուցած ըլլալու է որ լայնակի ծախող ու աղետաբեր քայլ մը անելու յուսաւտ որոշումը տայ ինքիւն. գերագոյն անշարժութեան հասած կամ հապը կըլած ըլլալու է: Պատմութիւնը վեհափառութեն կ'ազդարարէ մեզի այն ազգերու դժնէ եւ ողբերգական վախճանը, որոնք ուրիշի աջը նայելու չարքին հասեր են:

Երկրորդ՝ Ռիզա պէյ քաղաքացի կ'ընդունի — ճարտաստ գերաւորութիւնով մը — որ թիւրքի քախտը մեծ տէրութիւններու բարեփոխութեան կախում ունի եւ խնդր չ'ընեն իր աւելի եւ անոնք որ զան չարը մարին, թիւրքիս բարեփոխութեան, սահմանադրութիւնը վերահաստատեն, եւ այլն. միւս կողմէն սոսկ ու մ'կ'ուզայ վրան անոնք միջամտութեան թիւրքի ապագային համար. որովհետեւ պարզապէս չենուն, եկէք խածէք մեզ, ըսել պիտի ըլլար: Ի՞նչ ընելու է հապա, Ռիզան ծախող հակօրինութեան մը մէջ է. Բարիպտոսէն կ'ըլլէ ճշտ Սիւլայի մէջ կը գլորի:

Ռիզա պէյը յեղափոխութեան կը խորշի. եւրոպական մ'իջամտութիւն է մը վախնալուն, բայց միեւնոյն ժամանակ տէրութիւններու բարեհաճ եւ անշահախնդիր մ'իջամտութիւն է նաեւ: Երբ երկիրը անշուշտ ներքին դիմադրական ուժ ունենայ:

Ժողովրդային ներքին արժանաւոր յեղափոխութեան աւելի յուսալիութեան կայ բարձր մը ծնելուն, քան օտարներուն ձեռքով, որոնց իրաքանչիւրը օսմանեան կայսրութեան սեւօքին կ'աշէ անկէց քան մը թաթելու համար: Եթէ ատոնք զան ծեր խօսքը մտնել — հոբիւնի սեւ-սիւրուն աշխարհի համար չեն զարմնշուշտ — ոչ թէ ծեր փափաքած օսմանեան կայսրութեան «ամբողջութեան» պահպանումին համար, այլ շատ շատ «բժշկներու խորհրդակցութիւն» մը ընելու համար պիտի գան, ինչպէս կը սիրէին ըսել երբեմնի դիւանագետները, եւ... գիտորական քայլերով, հետեւին քերելով պատմութեան, մոմեր, — Ռուսաստանը իսկ ու միւսի քար մըն ալ կը բերէ — որովհետեւ հակառակ դրական փիլիսոփայութեան աշխարհի այդ զօրաւորները անխախտ հաւատք ունեն թէ իր աւելի եւ ունին թիւրքի վրայ եւ ոչ պարտաւականութիւնն են անոր հանդէպ: Զեր կարծած անկար պատմութեանը կը բզբտեն այդ «պարկեշտ միջնորդները», եւ դուր, ո՞վ գիտէ, ծեր քարի երազներուն իրազորումը կը դիտէք աշխարհի ծով-ծով կողմ:

Երբ տեսնեն որ երկիր մը ներսէն փտած է եւ անընդունակ ինքզինք չահածելու կամ թիւրքի պէս վարորդը անգամ կապելու, չեն գուրգուրար վրան, քարտէսը կը խաղաղեն ինչպէս Զինաստանը կամ արեւելէ շապիկ կը հագցնեն անոր ինչպէս թիւրքիսին... Ռիզան կը հաւատայ — այլ հաւատքը քիչ մը ոգեւորէ գուցէ զինքը — որ տէրութեան թիւրքի մէջ ունեցած շահերու հակամարտութեան վերջապէս մղէ զիրենք քան մը ընելու այդ տիտուր ուժիմը տապալելով: Դար մըն է շահերու գլուխ-

պատուութեան կայ, ճիգեր ու խրատներ ալ չեն ինչպէս Եւրոպայի քանի մը պետութիւններու կողմէն. բայց թիւրքիս քարայրը մնացիւ է. ուր էր հոն ալ չէ, շատ ետեւ գացած է: Գիտէր թէ այս դարուն մէջ քանի վայրերի ցեղեր քաղաքակրթեցան ու մարդ եղան, Ալ օսմ'ան դէպքին մինչեւ ականջները կարծրցնելու աստիճան: Եւ ինչ որ վրդովիչ եւ վատիչ է, քուր դեսպանները, Պօլսէն հեռանալէ առաջ, գրեթէ անոնց քաղաքութեան, յիշատակի պէս իրենց փորձառութեան յոռետես վճիռը կտակած են թիւրքի իբր ընտան. Մէկը կ'ըսէր. «Համոզւած եմ, որ թիւրքիս յուսալիութիւններու երկիրն է»: Միւսը՝ «Զարիքը այլ եւս անուղղիչ է»: Երաւունքը բաւ չեն, երբ մարդ մը ինքնիրմէն չէ քիչ մը:

Ռիզան զարմանքով իրաւունք ունի հարցնելու, ի՞նչ է ուրեմն թիւրքիս. — Ոչինչ: Ի՞նչ մտադիր է ըլլալ — ?

Մեր կարծիքով օտարին վրայ յոյս դնել նամ'էր դործ է. յուսահատութեան ու տկարութեան նախնի մը: Պատմութեան փշոտ ու քարքրու ուղիին վրայ. անորոք տիրեց իր լայնայն աշխարհով մեզի կը ցցնէ մարդկային ստորնութիւններու ու անիրաւութիւններու մէջէն հետեւելիք ճամբան: Եղափոխութեան բովի մէջ կ'ընայ միայն պատրաստիլ այն թիւրք սերունդը, որ տապալելով արդի ուժիմը, այնքան ուժ կ'ունենայ, որ օտարի միջամտութեան չվախնայ:

Երիտասարդ-թիւրքիս ուժաւառ ու... խոհեմ շանքերը, յաճախ վատութիւնը կը տխրեցնեն մեզ: Ընդհանուր փտութեան ու շտամ քարքարութեան դիմաց, երբ կրտսաւէր որ Բարլայի «Լեհմացած» հոգիներու հրախաղութիւն մը առաջ գար. արեւի աշխարհին վրայ տեսակ մը ամայալու մեռածութիւն կը նշմարենք: Արեւը մէջը մտնել է:

Վերջին թիւերէն «Օսմանլը» լսելով որ սուլթանը ծանր հեռանդ է, աղիողորմ ու սրտաբուխ կոչ մը կ'ընէ Ազալէին (հոգեւոր հեղափոխ) որ շուտով օգնութեան համար իրենց ազգին: Մտաւարժ է, է՛: Կարծես վրդիւրի նաւ կ'աղօթեն:

Exterminez, grand Dieu, de la terre où nous sommes
Quiconque avec plaisir répand le sang des hommes 1).

Ա՛հ, եթէ Ազալէն այնքան փութիւր չըլլայ «Օսմանլը»-ի պաղատանք լսելու, ի՞նչ ընելու է: Սպասելու է մինչեւ որ վերի աշխարհին քէյֆը գայ անքաւելի ոճրագործը մէջտեղէն վերցնելու համար: Նասրէդդինին է այն ատեն:

Թիւրքիս ուրիշներուն եւ երկրի աղերսելով չի ազատել. ամէն քան ուրիշէն սպասելով աւելի կը մօտենայ իր բարոյական գնտուղութեան: Եղափոխական մարտը հոսանք մը չէ՝ կարելի անցնել այդ Օգիսի անոնք մարտելու համար: Զէ՛ կարելի լացնել ու խանդավառ թիւրք ժողովուրդը ազատութեան եւ արժանապատուութեան սրտոտ տնջանքներով. անոնց յեղափոխութեան մարմաւարդին թիւրքիս պիտի մղի ու ժանգոտի: Պալատական միջին ու եղանային դաւադրութիւնները բաւ չեն երկրին հոգին քարծրացնելու համար, այդ տեսակ նենգ շարժումները — որոնք ամենաքստմեղի ոճիւններ են պարսպներու հոսելը գործւած — երբ ժողովրդին շունչը չի ներազործել, երկրին մէջ դաւաճանութիւններու, լրտեսութիւններու, եւ զարհուրելի գաղտնի սպանութիւններու սխաւմ մը կըստեղծեն. — օրինակ Եւրոպայի այդ պաթախանէն, ուր քարերը լեզու ունին մոլորի մէջ գործւած արհուլի սպանութիւններուն դէմ, եւ որուն մոայլ նկուղներուն ներքեւ, ոգիներու յաւիտենական ողբերգը կը լսի: Խնդրելու է որ Միլլիթ, «տանջանայ պարտէզ»-էն ետքը Palais des supplices մըն ալ գրէ իր քուր արհաւիրքներով:

Աշխարհի օրինակ մը տալու համար այդ մարդուն դատաւիւրը Աստուծոյ ձեռքէն է: Ինչո՞ւ համար պահել այդ շունջանողին Եւրոպայի մէջ որ զօրաւոր քանակ ունենալէ կը վախնայ, հզօր նաւատորմով կ'ահաբեկի, պարկեշտ նախարարներ ունենալէ սիրտը հաւուղղ կ'ելլէ, լուսամտ, երջանիկ ու արդարասէր ժողովրդէն կը խրտշի, եւ անէծքի մը պէս մոխիր կը դարձնէ երկիրը: Զեռքէն զայ արեւն ալ պիտի խաւարեցնէ: Ինչո՞ւ երկնային դատի մաղթել, երբ հնարաւոր է աւելի հզօր աշխարհային պատ մը տալ անոր: Վստայ եղէք որ ընտելութիւնը չպիտի սոսկայ այդպիսի ցանկաւի պարսպութեան մը:

Ապագայ սերունդին օգտին համար գոնէ պէտք է վառել թիւրքի ջրացած երաններուն մէջ այդ մարդը կայծ: Հաւատացէ՛ք, յեղափոխութեան — ոչ ալլա՛հ — ծամբուն վրայ ցրցնուած պոռոտ մը արեւը աւելի արժէք ունի քան ամիսներու ծոռն ու նամազը: Այնպէս սրտի անուշ յուզումով մը կ'ըսենք թիւրքի համար, թէ ամէն վերջալուսի միւս երեսը արշալոյս մը կը ժպտի:

Պ. Ռիզա, ինչո՞ւ կը խափի ըսել Խաղաղութեան համաժողովին թէ, «Մենք յեղափոխականներ ենք»: ուրիշ ծար կայ ար-

1) Տէր Աստուծոյ, մեր երկրին վրայ հետեւեցնել մի թողոր ամէն անոնց, որոնք զարմութեան համար մարդոց արեւը կը թափեն:

զեօք սուլթաններու արիւնլայ ու անգաւտիւ ուժովը քարոզող ընելու համար: Նիւթական ու քարոզական թշուառութիւնը, սովն ու սրածուծութիւնը, որ խաւար ամպի մը պէս կը ծփանայ այդ «մեծերը» աշխարհին վրայ, ինչպէս փարստեղծ է:

Գիտենք որ Ռիզայ անխոռով ծայրով մը պիտի փախայ մեզի միշտ նոյն պէտէն «սահմանադրութիւն», որ քարի պարիկի անուշ աշքերուն պէս կը քաղին մէջ իսկ չի դադրիր անոր հետեւի: Ուրիշ բան չիլ չ'ուզեր Ռիզայ: Նախանձելի թիւրքիոյ մը ծննդաբերութեան համար պէտք է, սահմանադրութիւն... միշտ սահմանադրութիւն: Ուրեմն կեցցէ՛ սահմանադրութիւն: Ուրեմն մը չէ ան, այլ զորահաւոր մը որ իր պողպատէ կուռ զորահանրուն մէջ թիւրքիան պիտի պատսպարէ:

Ըստ սովորութեան օսմանեան «Օրինակիքը տարւել տարի կը վերատպի. սուլթանը վարպետօրէն իր գահակալութեան օրով հաստատուած ու վիճած սահմանադրութիւնը, նոյնութիւննով տպել կուտայ այդ օրինակիքին էն սկզբը, ուրով չիլ չ'ուզէր հաւատացնել, որ թիւրքիան սահմանադրական պետութիւն մըն է արդէն. քայց չի վարանիր նաեւ յայտարարել որ իր ժողովուրդը զիւ քարքառոտ, սահմանադրութիւն խելքը չի համար, երեւայ է ան, բնաւ իշտէ վերջէն:

Ռիզա պէյ կրեւայի պարզամիտ ոգեւորութիւն մը եւ հաւատք մը ունի այդ քրտոյ սահմանադրութեան հրաշագործութեան վրայ, որը կարելի է միագէշերու մէջ զետեղել, քայց ոչ թիւրքիան խնդացնել անով:

Ճիշդ է չի գործադրել, չէ գործադրած ալ եւ որուն համը մարդ չի գիտեր զեռ, «արգելեալ պատգով» քայց Ռիզան կը հաւատէ թէ ճաշկաստանի փրկութիւնը նոյն է եւ քաւ է որ ահաւն դալի մէջ մը այդ պտուղին... Աստուծոնքու պէտ պիտի ըլլայ: Երանի՛ քեզի թիւրքիա:

Ամէն թէօքի գործնական դառնալու համար, խելացի ուղիղ ու արժանաւոր ձեռքեր պէտք են. անմոռ զէնքը անձնասպանութեան գործիքի մը չիփխելու համար: Թիւրքիան այդ զուլի-ներէն, պարկեշտ ու ձեռնասա մարդիկէ անձնուած է: Սուլթանը քամեց, շորցոց օնը հոգին, ատկեց աւելի մեծ պատիժ չէր կրնար ըլլալ թիւրքիոյ համար: Թիւրքիոյ ներկայ վարչութիւնը ընդհանրապէս, տգէտներու, գողերու, քախտախնդիրներու, մարդասպաններու ահելի խաժամով մըն է. եւ եթէ ունեցար քարեկիճ նախարարներ, անոնց ալ հետքերն յայտնի չէ: Կ'ուզէր աստուծային օրէնքներ ալ վար իշնցնէր երկրքէն, անօգուտ է: Ասոնք ալ ամէն տարի կրնան տպել, յայտարարել, քայց կը մնան նոյնքան միտելածին, որքան մեր այդ սահմանադրութիւնը: Պէտք է աւելի վերին վար լաւ հնդ մը այդ մոռնաւ ուժովը եւ ապանեկել ան, պէտք է փշել երկրքի վրայէն յեղափոխութեան խորունկ, վրէժնոյնք ու աւետաքիք քամին. այդ աղքի դէպ ուրիշ կերպ չի մարդիք: Արիւն ու կրակը միայն կրնան այդ մթնոլորտը մաքրել ու նոր թիւրքիան ստեղծել: Խնդիրը նոր կարգաւորութիւնը մէջ չէ, ինչոր սովորահետ քանն է, այլ այդ կարգաւորութիւնը գործադրելու ընդունակ նոր սերնդի գոյութեան մէջն է: *«Soi meausmes, but men»* մարդ կը պակսի ըսած է թիւրքիոյ համար:

Զուլ. Ռիզա պէյ, մեր յիշատակագիրը արցունքով սպառնում էր. արդարութեան երեսը տնտեսութեան համար ստիպում էր, Օսմանի ատենը ելլող հոգիին պէս, միշտ ձեռքով դէն ընել մեղքերնիդ:

Շատ լաւ զիտէք որ յաղաղութեան համաժողովը յօշանդական պայմաններին մէջ քաշուած իր փոքրուշտ ու մարդատես փիլիսոփայութիւնը ունի. դուք մեր մարդասիրական խոհի մ'թէօրինեցով չէք կրնար ետ համոզել ան, ոչ ալ խախտել անոր բէյքը: Ինչպէս մեր թիւրքիան ստեղծելով չէր կրնար զրկել չամիդը Սատուրնոսի պէս իր գաւառները լափելու գերազանց հաճոյքէն: Աւելի եւս չէք կրնար խաբել ան. կ'ըսենք «խաբել», որովհետեւ Եւրօպայի իսլամի մ'իշաւ մ'տուր Եւրօպ, դուք հարկաւ կ'ուզէք օգտուիլ թիւրքիան վերականգնանալու, անոր յառաջդիմութիւնը, քաղաքական ուժն ու զարգացումը ապահովելու համար: Իսկ Եւրօպան, ինչպէս յայտնի ըլլաւ է ձեզի, այնքան անմաւեր չէ որ աշխատի իրեն համար հօգի մըքակիցներ պատրաստել, ոչ ալ ձեզմէ աւելի անփոքր է խորամանկութեան արհեստին մէջ: Եւրօպան եւ ուրեմն մեր յոյսերուն հիմքը:

Ճիշդ դուք վարքերնիքու կրկինը դէպի չէ պէս ուխտի կ'երթար հոլորիներու աշխարհին կարեկցութիւն հայցելու համար. մեծ մարդասպանը իր հակոսի քարայրին մէջէն մեր վրայ քաջ քան ինչալու էր, եթէ խելք ունենար:

Անոր հետքը գտնելու համար չեղաւէս մը պէտք է. կամ անոր չնդին պայտնելու համար ժողովրդի մը միահամուռ մտնելը:

Հասկցուցէք մեր քաղաքական ժողովրդին, թէ արդարութիւնը եւկելիք երկրաշափութեան պէս, արքայական պողոտայ չունի:

«Սպասում» կնք...

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

* *

Պր. Ամիլկար Զիլլերիանի հետեւեալ զեղեցիկ խմբագրականը գրած է *La Petite République* ի 15 օգոստոս ամսարին մէջ.

«Արքաներու պատմութիւնը ժողովուրդներու տա-
գապանքին պատմութիւնն է» ըսած է Պ. Ժ. Պրուդոն:

Ատկէ աւելի ճիշդ և իրաւ բան չկայ:

Արգիւլ Համիդին՝ Գլադստօնի խօսքով, թագակիր այդ մեծ մարդասպանին թագաւորութեան պատմութիւնը, հայ ազգին տառապանքներուն հարազատ պատմութիւնն է:

Եւ ինչ տառապանքներ: Պատմութեան ոչ մէկ շրջանին մէջ կարելի չէ գտնել այդտեսակ խայտա-
ռակ արարքի մը օրինակը, ոչ իսկ Զինգիզ խանի կամ
Թիմուր Լենկի ատեն, որոնք մարդու գլխէ բուրգեր
կը շինէին:

Սուլթանին արիւնուշտ հրոսները անողոր կերպով
մորթեցին այդ դժբախտներէն երեք հարիւր հազար
հօգի, առանց խորելու հասակն ու սեռը:

Չոհրու մռնչիւնները արար աշխարհ թնգացուցին և
աշխարհ անվրդով ու անտարբեր մնաց:

Անոնց արիւնը, որ հեղեղեց օսմանեան կայսրու-
թիւնը, ցայտեց բոլոր մեծ՝ քաղաքակիրթ ըսած պե-
տութիւններուն վրան, և ասոնք հաշիւէ և շահէ կազմ-
ւած վատութեամբ մը քաջալերեցին և թող տւին որ
կատարել ժողովուրդի մը այս սպանութիւնը:

Եւ այն հայերը, որոնք ջարդէն խուսափած էին,
վերջերս միամտաբար յոյս դրին Լահէի վեհաժողովին
վրայ:

Եւ խաղաղութիւն անունը հեղեղեց կրող այդ վե-
հաժողովին անդամները մտիկ չըրին անոնց, իր արժա-
նաւոր ներկայացուցիչներ ելլալով քէօշկի անձաւին մէջ
թագնած վայրի գազանին:

Աշխարհիս վրայ ցանուցիր այդ հայերուն մեծագոյն
մասը իր աղերսարկու ձեռքերը կը մեկնէ — ահա իր
սիւալը — ալ ոչ այն կառավարութիւններուն, որ իրենց
դաւանքին և երեսի վրայ թողին, այլ թշուառութեան և
տառապանքի իրենց եղբայրներուն, հարստահարած
ազգերուն:

Սակայն այդ ազգերու համակրանքը չի կրնար բա-
ւել անոնց: Ան զինաթափ չըրաւ դահիճը, և կարող պիտի
չըլլայ արգիլելու վերջին ոճիրն ալ, անոնց խմբովին
գաղթեցումը Երէտէ:

Քաղաքակիրթութեան աչքերուն առջև և լոյս արեւին
տակ կազմակերպւած ու կատարւած ջարդերէն ետք,
թալաններէն ու բռնաբարութիւններէն ետք, ահա՛ կըս-
պառնան անոնց՝ հայրենի երկրէն խել և ոճրագործ-
ներու նման հեռու տեղեր փոխադրել:

Սուլթանը, Գերմանիոյ կայսեր այդ եղբայրը, այդ
մտերիմ բարեկամը. Անգլիոյ, Ռուսիոյ, Ֆրանսայի, Իտա-
լիոյ և Աւստրիոյ այդ պաշտպանեալ, առայժմ, չուզեցով
այլևս բաշխօգուկներն ու քիւրդերը գործածել վերջ-
նական փողոտումին համար — բան մը որ, սակայն իր
խնամակալներն ու բարեկամները թող պիտի տային որ
կատարել և հաւանութիւննին ալ տային — սուլթանը
իր քաղաքական մարդ և որ կ'ուզէ արժանի ըլլալ իմ
քաղաքակիրթ պաշտօնակիցներուն, այդ գաղթեցումը

առաջարկեց Նիկոլայ Բ.-ին, Փրանսական Հանրապետութեան դաշնակցին, և Նիկոլայ Բ. ալ տուա իր հաւանութիւնը:

Միթէ եւրոպան թող պիտի տայ որ այս վերջին անամօթութիւնն ալ գլուխ գայ:

Եւ ինչո՞ւ չէ: Եւրոպան ստիկ աւելի մեծերը թող տուա որ տեղի ունենան. կը բաւէ յիշենք հայերուն փողոտումը, իրենց յաւիտենական թշնամին դէմ կուող հերոս կրէտացիներուն ուժակոծումը, Ֆինլանդայի ստըրկացումը, Վնգլիոյ մէկ մասին՝ խեղճ Իռլանդայի անգթօրէն սիստէմական բնաջնջումը:

Մեր ժամանակը ամբողջովին գրամի, հաշիւ և գծով թեան ժամանակ է: Արդարութիւնը, մարդկայնութիւնը, արուժիւնը դատարկ բառեր են: Ասոնք մեռած են և արդէն երբեք կարենորութիւն չեն ալ ունեցած դիւանագիտական զուգորդութիւններու մէջ, որովհետեւ խաբէութիւնները, ստութիւնները, անգթութիւններն ու վատութիւններն են որ կը կազմեն դիւանագիտութիւնը:

Ռուսիոյ, Անգլիոյ և Գերմանիոյ շահերը կը պահանջեն որ սուլթանը պաշտպանեն իրենք: Ձոհերը բանի տեղ դնող չկայ:

Պաղպաղ հաշուող այդ արարածներուն համար ինչ կարենորութիւն ունի մնացած բոլոր հայերն ալ զոհելը:

Ռուսիան, թիւրքերու դարեւոր թշնամին, կը պաշտպանէ ասոնք Անգլիոյ և Գերմանիոյ դէմ:

Անգլիան իր առեւտուրի բարգաւաճումովը մտազբաղ ստիպւած է կամ Պոլսի տէրն ըլլալու, և կամ ամէն կարելի միջոցներով արգիլելու որ ուրիշները չտիրանան անոր: Անգլիան թիւրքը կը պաշտպանէ Ռուսիոյ և Գերմանիոյ ցանկութիւններուն դէմ:

Վերջինս ալ իր սպաներն ու զէնքերը խրկեց օսմանեան կայսրութիւնը պաշտպանելու փոքրիկ Յունաստանին դէմ: Սուլթանը իր բարեկամն է շինքը, ինչու որ Թիւրքիան մեծակուռ, ահեղ ու բնական պատար մըն է Գերմանիոյ և Ռուսիոյ միջև:

Միւս տէրութիւնները, Աւստրիան և Իտալիան, Գերմանիոյ ետեւէն կը քալեն. Փրանսան Ռուսիոյ պոչին փակած է:

Այն օրը երբ Անգլիան, Ռուսիան և Գերմանիան իրարու մէջ համաձայնին բաժնելու այդ ճոխ որսը, որուն ամէնք ալ կը ցանկան, այն օրը կարելի պիտի ըլլայ գոչել նմանելով գիւցաղ Բօցուշկոյին. *Finis Turquiae*:

Այսօրինակ ցանկութիւններու առջև դժբախտ հայերուն իրաւունքը գոյութիւն չունի:

Անամօթ Արդիւ Համիդը որ այս ամէնը գիտէ, կը ինդայ ամէնուն վրայ և սրտին ուզածը կ'ընէ. կացութիւնէն կ'օգտուի իր վերջին ոճիրը գլուխ հանելու համար:

Այո՛, ճիշդ տեղն է գոչելու. «Այ՛ պղտիկներուն: Այ՛ տկարներուն: Այ՛ յաղթածներուն»:

Ո՛հ, եթէ մեծ ու վեհանձն Փրանսան ըլլար ինչ որ դար մը առաջ էր, մինչև իսկ ինչ որ յիսուն տարի առաջ էր, կարելի պիտի ըլլար հայերուն ըսել: «Յուսացէք անոր վրայ»:

Բայց, աւա՛ղ, ան ալ ձեռք քաշեր է իր երբեմնի աւանդութիւններէն, ալ չի պաշտպաներ հարստահարած ժողովուրդները, անցեր է հարստահարիչներուն բանակը, և ինքն ալ արատաւորած է հայերու, կրէտացիներու և յոյներու արիւնով:

Այս սոսկալի կացութեան մէջ, ինչ ուրեմն ընելու են հայերը:

Գործել կամ անհետանալ:

Յուսահատութեան քաջութիւնը հարստահարածներուն գործն է:

Լաւագոյն է մեռնիլ առիծի պէս կուելով, քան թող տալ որ ճգմէն իրրու ճճի կամ մորթեն ոչխարի նման:

Ուրիշին վրայ վստահիլը միամտութիւն է. համակերպիլը՝ վատութիւն:

Ժողովուրդները յոյսերին դնելու են միայն իրենց ուժին, իրենց քաջութեան, և իրենց վրայ:

Չեղբերը միացնելու չէ աղբսելու համար. բարձրացնելու է զարնելու համար:

Երբ յաղթած են՝ աւելի պատաւաւոր է կոկորդդ ներկայացնես դահճին, քան դաստակներդ շղթային:

Ժողովուրդները միշտ պիտի յուզին վրժառու ժողովուրդի մը պատերազմական աղաղակներով. անոնք կ'արհամարհեն լուծն ընդունողներու հեծեծանքները:

Եթէ հայերը չունենան յուսահատութեան այս գերագոյն քաջութիւնը, ուռճացած վրէժխնդրութեան արդար զգացումով մը, թող համակերպին անհետ ըլլալու, տիեզերքի արհամարհանքն ու մոռացումը տանելով հետերին:

* *

Մակեդոնական Գերագոյն կոմիտէին պաշտօնաթերթը, *Les Réformes*, իր յունիս 24-ի խմբագրականին մէջ խօսելով Լահէի վեհաժողովին առթիւ Դաշնակցութեան հետ միաձայն իրենց հրատարակած յայտարարագրի մասին, կ'աւելցնէ.

Այդ բանը մենք ըրինք մեր եղբայրներուն հետ, դիւցաղ Հայաստանի զաւակներուն հետ, որովհետեւ վստայով ընդհանուր է եւ երկուքս ալ հաւասարապէս պէտք ունինք պաշտպանելու Բոլոր ապստամբողներուն հետ եղբայրաբար միացած՝ մենք պիտի կուինք սուլթանին բռնապետութեան դէմ—որովհետեւ մենք կ'ողորմենք, ո՛չ թէ ազգայնական ցնորք մը, ցեղի մեծ գաղափար մը իրագործելու համար, այլ Մակեդոնիան ազատ երկիր մը ընելու համար, որ պատկանի ինքն իրեն, անխտիր՝ հոն բնակող բոլոր ազգութիւններուն: Մենք միշտ կոչու՞մ ըրած ենք Թիւրքիոյ հարստահարած ժողովուրդներուն, որոնք զուլի կը վերցնեն Արդիւ Համիդի խուժուժ ուժիմին դէմ, եւ միայն հայերն են որ ձեռք կը մեկնեն մեզ: Երանի՛ թէ ապագան միւս հարստահարած ազգերն ալ պատրաստէր Երզրզի արիւնաբոլոս բռնակալին դէմ կուելու համար: Թիւրքիոյ ատելի ուժիմին վերջին օրը պիտի ըլլայ ատ, եւ մենք պիտի տունենք ատ, յաղթանակէն ետքը, մեր դրացի բոլոր ազգերուն հետ, անկեղծ ու գորովալիլ եղբայրութեամբ մը:

* *

Պր. Պիէռ Քիյառ — Փրանսայի երիտասարդ բանաստեղծներուն և հրապարակագիրներուն ամէնէն համակրելիներէն մէկը — հայանպաստ յօդածներու շարք մը սկսած է *Aurore*-ին մէջ, ՄԵԾ ՄԱՐԴԱՍՊԱՆ խորագրին տակ, ուր կը նշաւակէ և նշաւակել կը խոստանայ շարունակաբար Արդիւ Համիդին բոլոր ոճիրները, ինչպէս նաև անոր մեղսակիցներունը, եթէ մինչև իսկ Հանթթօ կամ Քօնսթան ըլլայ անոնց անունը:

* *

Պր. Ա. Ռւման *La Semaine parisienne*-ի մէջ խօսե-

լով սուլթանին կատարած ջանքերու մասին ֆրանսական մամուլը կաշառելու, որպէսզի լուծիւն պահէ իր ուժերնեւրուն շուրջը, այսպէս կ'եզրափակէ.

«Սակայն հարստահարածները օրէօր կ'ուժովնան, բողոքող լրագրերը կը բազմապատկին եւ շուտով բոլոր ջանքերու հակառակ ամբարտակը պիտի խորտակուի եւ վրէժխնդիր ալիքը իր հետ պիտի քշէ տանի այդ ամբողջ մրուրը, որ կը կազմեն մարդասպանները, մորթողները, ջարդողները եւ պղտոր ջուրի մէջ որսացողները»:

* *

Պր. Օգիւստ Բէնառ վերջերս մեր գաղտնի նպաստաւոր քանի մը յօդաւորներ հրատարակեց *Indicateur Amiennois*-ի եւ *Journal de Bordeaux*-ի մէջ, որ արտատպեցին *Autorité* եւ *La Semaine parisienne* լրագրերն ալ:

Թիւրքը, — կ'ըսէ պ. Բէնար իր առաջին յօդաւորին մէջ, — ատելութեան եւ խորշումի առարկայ մը պիտի ըլլայ միշտ հայերուն համար, որոշափ անոնց ազգայնութեան դատը առկաի մնայ, եւ որոշափ քրիստոնեայ պետութիւնները վերջնապէս չլուծեն աս, Սարգիսութեան ամէնամիտ փառքին համար:

Քիւրդերը մնացործ Արդիւ Համիդին պաշտպանութեան ներքոյ ցրեցան զիւրերը եւ հանգի ջարդեր կատարեցին:

Ե՛րբ վերջապէս զայրացած Եւրօպան պիտի համարձակի վերջ մը դնել Բիւզանդիոնի այդ ներքին ուսումնասիրած եւ հրամայած սարսափներուն:

Խաչակիրներու Եւրօպան սիրտ պիտի ընէ՞ վերջապէս իբր տէր խօսկու Մահմէտի վատասերած զաւակներուն: Սակայն կը բաւէր որ ձեռքը միկնէր դպրեցանքներու համար բոլոր այդ անիրաւութիւնները, եւ վայրկեանը թերեւս մօտ է, կ'ուզենք յուսալ, երբ այդ կորովալի որոշումը պիտի տայ ինքը:

Երկրորդ յօդաւորին մէջ պր. Բէնառ խօսելով քիւրդերու վերջին խժգոթութիւններու մասին, կը յարէ.

Հակառակ իր առերեւոյթ անհոգութեան, Եւրօպան որ Հայաստանի ձայնը լսած է, պիտի հարկադրուի իրերու զօրութեամբ, իր ձեռքն առնելու այդ ազգին պաշտպանութիւնը եւ իր պայմանները թելադրելու սուլթանին:

Այդ դժբախտներուն կացութիւնը տաքնապալից է, աճապարելու է վերջ մը դնելու ատոր: Ֆրանսայի հայասէրները պարտաւոր են իրենց բողոքները լսելի ընել տալ ամէն սեղ, մամուլին մէջ, ժողովներու մէջ, եւ ամէն միջոցներով, եւ հաղորդել Պարիզի օսմանեան դեսպանատան: Արդիւ Համիդին պաշտօնատարները պիտի իմանան, ինչ որ արդէն չեն անդիտանար, թէ ինչպէս կը գնահատուին արտասահմանի մէջ իրենց վահապետին խաղը ու խայտառակութիւնները, եւ Բիւզանդիոնի այդ բռնապետը, մինչեւ որ զայն ժամը երբ պիտի ստիպուի ինքը իր ասիական քանի մը նահանգներէն բաժնուելու, հաստատապէս պիտի իմանայ որ գերագոյն արհամարհանքի մը առարկան է ինքը — ո՛չ միայն իր երկրին մէջ — այլ Եւրօպայի բոլոր միւս երկրներուն մէջ:

* *

Պր. Մալքօլմ Մակ-Բօլլի «Սուլթանը եւ մեծ պետութիւնները» ծանօթ հմտալից գիրքը վերջերս իր ֆրանսերէն թարգմանութիւնն ալ ունեցաւ: Պր. Իւրքէն Գօհիէ գեղեցիկ առաջաբան մը կցած է անոր, ֆրանսական տեսակետէն քննելով նոյն եղելութիւնները: Աւելորդ չենք համարիր հետեւեալ քաղաածը բերել անկէ:

Արդ, Եւրօպան ալ չի կրնար աչքերը գոցել, ոչ ալ ակնջները խցել. Եւրօպան ալ չի կրնար կեղծել թէ լսան մը չի դիտել: Կը տեսնէ ինքը, կը լսէ, գիտէ ինքը, երբ չի չարմիր, անպատուութեան մէջ կը թաւալի: Մինչդեռ մենք ժուռ կուզանք մեր յաղաքներուն մէջ, լաւ խողանակած, շողշողուն, փայլփլուն, մինչդեռ կը ձառնէք մեր քաղաքակրթութեան գեղեցկութիւններուն վրայ, մինչդեռ մեր կառավարիչները ատենախօսութիւններ կ'ընեն, եւ կը գումարեն մարդասիրական ժողովներ, մենք գիտենք, որ մեր դռներուն առջեւ դիակներ կը դիպւին եւ ամէնէն ահաւոր ոճիրներ կը բազմապատկին: . . . Բերլինի Վեհաժողովին՝ Եւրօպան յանձնառու եղաւ անհրաժեշտ բարենորոգումներ մտցնել տալու, օսմանցիներու բարբարոս ջամբարը քաղաքակրթ կրկրի մը վերածելու համար: Այդ հանդիսաւոր խոստումները ալ աւելի քան ստաննէ որ իրագործին: Պէտք է հրաւիրել թիւրք ժողովուրդը, եւ հնարաւոր ալ ընել, որ Եւրօպայի պատին պատշաճ ուժով մը ընդունի ան: Այլապէս, մարդասպան Արդիւ Համիդին ոճիրները ապագայ սերունդներուն նազ զարչելի պիտի թւին. քան կարծեցեալ քաղաքակրթ պետութիւններու վատութիւնը:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Յ Ո Վ Ս Է Փ Ա Ս Տ Ո Ւ Ր Ե Ա Ն

(Թ Օ Փ Ա Լ-Տ Է Ր Տ Է Ր)

1875 — 1898

Հայ կաթօլիկ տարրը, մանաւանդ երիտասարդութիւնը ընդհանուր առմամբ, եթէ ոչ հակառակութեամբ, բայց մեղադրելի անտարբերութեամբ վերաբերեցաւ հայկական վերածնութեան այս ճգնաժամին: Մեծամասնութեամբ սնած ու կեանքի մէջ մտած կրօնական խաւարակու Միաբանութիւններու առաջնորդութեան տակ, ներքեւ անձնական գծով շահերու, յառաջիմելու ասպարէզ ընտրած պաշտօնէութիւնը, — հայ կաթօլիկ երիտասարդութիւնը, հայկական խնդիրը կարծես Լուսաւորչական հարցը ըմբռնելով, հետեւ հետեւ փախած է մարդկային պարտականութիւններու ամէնէն սուրբն ու ներքեւ կատարելէն:

Միթարական է սակայն տեսնել, որ ասդիէն անդիէն անզուսպ հոգիներ, անկարող ըլլալով այդ փակ ու նեխած մթնոլորտի մէջ սնունդ գտնել, ուռճանալ եւ արհամարհելով անասնացած դաւանակիցներու երեխայական նկատումներն ու հեգնութիւնները, իրենց ամբողջ ուժն ու կարողութիւնը բերել միացուցել են այն լծակին, որ կոչւած է հայ ժողովուրդը խեղդող կապանքները փշրել խորտակելու:

Եւ Յովսէփը, բնիկ տրապիզօնցի, այդ յարգելի բացառութիւններու շարքէն էր:

Յովսէփը մինչև 1895 սեպտեմբեր 26-ի կոտորածը մօտիկ համակրող մը կարելի էր համարել, բայց այդ օրէն սկսած դուրս եկաւ իրեն անվախ գործող մը: Այդ շրջանին մէջ տեղական գործերուն մատուցած ծառայութիւնը անգնահատելի է: 1896-ի ամառը՝ սիրով յանձն առաւ ցամաքային ճամբորդութիւն մը՝ գործի

մը ուսումնասիրութեան համար, և անվտանգ կատարելով իր դժուար պաշտօնը, բերաւ նոյնպէս թարմ տեղեկութիւններ աւերած խուլ վայրերու վիճակի մասին և այն տրամադրութեան՝ թէ ինչպէս զենքի հակառակորդ ծերունիներ իսկ, այժմ սրբութեան պէս կը պաշտէին այդ գործիքը, որ ամէնէն թանկագին նեցուկը եղած էր այն դաժան օրերուն:

Յովսէփ ալ անկէ վերջը նւիրեցաւ զենք, միմայն զենք հասցնելու գաղափարին. ամէն օր ծրագրեր կը ներկայացնէր կօմիտէին: Վերջապէս 1896 դեկտեմբերին նաւ նստաւ՝ ծովափնեայ վայր մը հանդիպելով շարունակելու իր ճամբան: Նաւը հասաւ Ռիզէ հասած էր, երբ ոստիկանութիւնը ձերբակալեց զինքը և խրկեց Տրապիզոնի բանտը. — մատնած էր. իր դաւանակիցներէն մէկը, որ պաշտօնեայ էր թիւրք հիւպատոսարանին մէջ, իր Յուդայի մատը խաղցուցած էր, անցադրին մէջ իրրեւ «վտանգաւոր» նշան մը դնելով: Տրապիզոնի մէջ Յովսէփ հարցաքննութեան ենթարկուեցաւ, բայց այնպիսի ծաղրաշարժ պատասխաններ տուաւ, որ տեղական վարչութիւնը անկարող ըլլալով բան մը հասկնալու անոր ցուցմունքներէն, Պօլիս ճամբեց զինքը:

Քանի մը ամիս ետքը ներման հետեւանքով Տրապիզոն խրկուեցաւ և ազատ ձգուեցաւ: Արդէն Նիհար և վատառողջ, բանտային կեանքն ու ցուրտ ձմրան թիւրք շոգենաւերով ճամբորդութիւնը անհետեւանք չմնացին. Յովսէփ թոքախտաւոր էր: Թոքախտաւոր, ինչ սոսկալի վիճակ յեղափոխականի մը համար... Արեւ միշտ առողջ միտք, ունենալ գործելու անշէջ եռանդ, բայց մարմնի տկարութեան պատճառով չկրնալ իրական դեր կատարել. ամէն վայրկեան խոր, շատ խոր զգալ, որ ինքը այնքան չի տար, որքան կը պահանջուի, — թոքական բանտային տանջանքներէն շատ աւելի մաշող ու անտանելի դրութիւնն է ատ:

Ընկերները ինչ որ կրնային՝ ըրին իր առողջութիւնը վերականգնելու համար թէեւ ապարդիւն. բայց ինքը չէր կարող անգործ մնալ. կ'արհամարհէր այն կեանքը, որ քաշնիքաշ պիտի վարէր ընդ իր անձի գոյութիւնը երկարելու համար: Այս ժամանակ Խ. Գիւղը, ծնողներուն մօտ գնաց, բայց հոն ալ հանգստութիւն չկրցաւ գտնել: Այն ընտանեկան գուրգուրանքն ու խնամքը և ոչ ընկերներու սփոփիչ գրեթէ չկրցին մեղմել իր վիճակը. «գործ կ'ուզեմ» — այսպէս կըսուէր իր նամակները. — «գործ կ'ուզեմ, մի թողուք որ շան պէս սատկիմ» — այսպէս կը վերջանային իր նամակները: Անգործութիւնը կըսպանէր զինքը:

Անցեալ տարի, 1898-ի ձմրան, Յովսէփ անգամ մըն ալ դուրս ինկաւ մասնակցելու իր սիրած գործին, բայց այս անգամ ալ ջանքախառ վերադարձաւ տուն: Մասն ժամանակի խնդիր էր այլեւ. օգոստոս 31-ին խաղաղ տրամադրութեամբ, միշտ երազուն ու անխուով սրտով, փականց իր աչքերը միանգամ ընդմիշտ, և գնաց միացաւ իր պաշտած եգիպտացիին, աւելցնելով երկու աչք ալ այն լուսաւոր աստղերուն, որոնք միշտ սեւեռուն հայեացքով անյաբօրէն կը դիտեն թէ մնացողներն արդեօք ինչպէս պիտի լուծեն անթիւ, անհամար պոհերուն վրէժը...

Թ Ե Ր Թ Օ Ն

Մ Ա Յ Ր Ը

Այլ գիշեր էր. ամէնքը վաղուց քնած էին, բայց գիւղի եզրում մենաւոր խրճիթի մէջ աակաւին խղճուկ լոյս էր պլպլուկ. Մարթան նստած էր մենակ, խորին տխրութեամբ նայում էր ճրագի լոյսին և դանդաղութեամբ օրօրում իր ծեր, յոգնած գլուխը: «Նա մտածում էր: Խեղճ, նա աշխատում էր հասկանալ բացատրել, թէ ինչպէս պատահեց, որ իր շէն օջախը այս կարճ ժամանակում դարձաւ աւերակ, թէ ինչո՞ւ ինքը՝ ընտանիքի մայր, սիրող ամուսին՝ յանկարծ, ասես մի չար, դիւթական ձեռքով, դարձաւ այրի, մոռացած ամէնից, զոհ խաւար գիշերայ միայնութեան, անտէրութեան սարսափներին, դարձաւ մի սեւաւոր, անձար բու, որ խաւար լուսութեան մէջ չարագուշակ վոյ, վոյ է կանչում: Ինչո՞ւ համար այս բոլորը... Մէկը միւսից ահաւոր, սեւ մտքեր գալիս խնկում էին նրա գլխում, լուծում պահանջում... Արքան բան կար մտածելու: Վատաբանտ, կարճամիտ կնիկ, որ մէկը հասկանար, որ մէկ հարցը լուծէր...»

Զիթէ ճրագի ծխախոռն բոցը մեղմիւ օրօրում էր, մերթ հանդարտ վերանում, մերթ ցածրանում, դողդողում էր, կարծես նա էլ էր անհանգիստ, նա էլ էր վախենում: Հեշտ է, մենակ, գիւղից դուրս, մենաւոր, ձգած խրճիթում... ճրագի լոյսից ձգած սոււերները խրճիթի այս ու այն կողմում նոյնպէս լաւ չէին, անդուր էին. Մարթան աշխատում էր նրանց էլ չնայել: Միայն լոյսն էր միութարական, միայն նա չէր վախեցնում. ինչ փոյթ, որ խղճուկ լոյս էր, որ հոգեվարք հիւանդի պէս մօտ էր հանգչելու. չէ՞ դարձեալ լոյս էր, օրօրուն, պլպլան լոյս. Մարթան նայում էր նրան և մտածում, մտածում... Հէնց այս առաւօտ թաղից նա իր ամուսնուն, իր խեղճ, ջրատար Մկոյին: Ախ, ինչ օրեր քաշեց թշուառ, որքան չարչարեց...

— Ոտքդ կոտրէր, տակդ մնար, որ դու իմ տունը ոտք չկոխէիր, Թորոս. քեզ տեսնեմ՝ դնացած ճանապարհդ մէկ տակ դառնայ. թող քո մօր տունն էլ իմի պէս սուգ մտնի:

Այս սարսափելի անէծքը նա արտասանեց բարձրաձայն, ձեռքն ուղղելով դէպի ճրագն ու ծխոտ, մրոտ ճրագակալը, — կարծես նրանց հետ խօսելիս լինէր: Թորոսը հարեան գիւղից հեռաւոր ազգականի որդի էր. նրան էր անիծում Մարթան, նրա վրա էր թափում սրտում կուտակած թոյնը. նա էր գլխից հանել, տարել Մինասին, իր միևնույն որդուն: Այժմ Մարթան լաւ յիշում էր բոլորը: Նա էր, անասուած Թորոսն էր միշտ գալիս, տանից դուրս կանչում, գնում էին, առանձնանում, խօսում, խօսում, փսփսում: Ինչ էին խօսում այնքան, — ինքը կարող էր իմանալ: Դէ, ընկերներ էին. ախ, թէ իմանար... Գնացին, եկան, փսփսացին, գնացին, եկան, և մի գիշեր անյայտացան: Ախ, սեւ դառնար էն գիշերը: Անխիղճ, անխիղճ, մրմնջում էր պառաւն, այս անգամ խօսքն ուղղելով որդուն. Թորոսն օտարի որդի էր, չցաւեց, իսկ դու... Թէ չմեղքացար քո ջրատար ծնողներին, խղճայիր գոնէ քո խեղճ ջահիլին, քո կնոջը, որին անտէր ձգեցիր: Օ՛, այնուհետեւ

ինչե՛ր անցան իրենց սեւաւոր գլխով: Ի՛նչ օրեր քաշեցին: Խեղճ հալւորին տաճիկները տարան, բերին, բանտ դրին, ծեծեցին, ծեծեցին, որ Մինասի տեղն ասի: Այն, ինչ անասուած են այդ անօրէնները: Մեր ցաւը, մեր սե օրը մեզ բաւական չէր, սրանց գազանութիւնն էլ մի նոր պատիժ, նոր ցաւ գարձաւ: Կարծես թէ՛ որ մենք իմանայինք մեր որդու տեղը, սար ու քար չէինք ընկնի, չէինք գտնի, չէինք բերի տուն: Տաճիկ ի՛նչ պէտքն էր թէ մեր սրտից առանց այն էլ արիւն է գնում: Այնքան չարհարեցին խեղճ հալւորին, մինչև անկողին ընկաւ և էլ չվերկացաւ: Հարսը՝ որ վաղուց էր հեռացել տնից, գնացել հէրանց, իր սե օրը ողբում: Ի՛նչ անէր խեղճ ջահիլը, օրը մի անգամ անօրէնները դիտմամբ տուն էին թափւում, հարս պահել կը լինէր տանը: Եւ այժմ մենակ էր մնացել Մարթան: Այս սե գիշերին, ամէնից մոռացած, նա մտածում էր իր զարհուրեցիկ անցեալի մասին. ներսից սիրտը ճմլում, քամւում էր: Նա արտասուում էր գառն, յորդ արտասուքներով: Խաւարից ու միայնութիւնից դուրս մի ուրիշ բան կար, որի մասին մտածելիս, քիչ էր մնում սիրտը պատռի կտկից: Հարեւանները սարսափելի բաներ են ասում... Նրանք իրր թէ կուր են բռնել զափթիւաների հետ, և բոլորն էլ... Բայց մայրը չէր կամենում հաւատալ, թէ իր Մինասն էլ նոյնպէս... Նա աշխատում էր չմտածել այդ մասին. թէ բարկացած էր Աստուծոյ, մի՞թէ իրենց քաջածնները բաւական չէին...

«Թրըխկ, Թրըխկ» գուռը թակեցին:

Պառաւր ծնեցեց. ո՞վ կարող էր լինել այսպէս ուշ պահուն: Նա մէկ կամեցաւ ծրագր փչել, կծկել, լռել: Գուցէ հեռանան գնան, ով և լինեն: Իսկ եթէ յանկարծ դուռը կոտրե՞ն և ներս մտնեն խաւար խրճիթը... Օ՛, այդ վարհուրեցի էր, գոնէ լոյս լինէր:

«Թրըխկ, Թրըխկ» կրկին թակեցին գուռը, այս անգամ աւելի շտապ, աւելի պինդ, աւելի բարձր: Անհնարին էր լռել: Մարթան վեր կացաւ կամացուկ, թաթերի վրայ մօտեցաւ դրանը, շունչը պահելով ականջ դրեց. ո՛չ մի ձայն... Նրա կոկորդը սեղմւում էր, ատամներն իրար վարկուում երկիւղից:

— Ո՞վ ես, վերջապէս սիրտ արեց նա ձայն տալ կամ մացուկ:

— Ես եմ, բաց գուռը:

— Ախր, ո՞վ ես դու:

— Ես եմ, մարէ՛. բաց, շուտ բաց:

«Մարէ՛», էլ ո՞վ կարող էր լինել, «Մինասն է, Մինասն է», մրմնջում էին պառաւի դողդոջուն շրթունքները: Նա շտապ շտապ սկսեց քաշքշել գուռը, որ բաց անի, մոռանալով, որ փականքը չի բացել դեռ: Սաստիկ տագնապով բռնած, նա փոխանակ բանալու դուռը՝ փակում էր. կամ քաշքշում անտեղի, մատները տրորում, կոտրատում, արիւնոտում. և գուռը չէր բացւում:

— Բաց, մարէ, շուտով բաց, լսում էր դրսից:

— Բացեմ, քե մեռնեմ, ձէնիդ մեռնեմ, բացեմ. կուրանան աչքերս, ոնց որ կուրացան. լաւ չեմ տեսնում փակը:

Վերջապէս գուռը բացւեց. ներս մտաւ մի երիտասարդ, հրացանը ձեռքին, փամփուշտների երկու շարքը խաչկապ ձգած ուսերից: Մարթան առանց նայելու վրայ պրծաւ և նրան իր գիրկն առաւ. արցունքները

հեղեղի պէս թափւում էին աչքերից. էլ չէր խօսում, այլ համբուրում էր ու հեծկտում, երկար, երկար...

— Խօսիր, լսեմ ձայնդ, արեւի մեռնեմ, ասաց նա վերջապէս. ասա՛, ո՛ւր էիր թողել մեզ անտէր-անտիրական. ո՛ւր թողիր սեւաւոր հօրդ, որ դարդամահ էլաւ քո ցաւից: Ապա նա նայեց վերջապէս երիտասարդի երեսին և մի րոպէ սառած կանգ առաւ. յետոյ յանկարծ բոլոր թափով յետ մղեց նրան իր գրկից և սարսափած ճչաց.

— Այ՛, սեն իմ գլխին, Մինասը չի, Մինասը չի. հեռո՛ւ, հեռո՛ւ ինձանից...

Թորոսն էր...

Շաւարած, ապշած՝ երիտասարդը յանցաւորի պէս կանգնել էր գլխիկոր, չգիտէր ի՛նչպէս մխիթարէր ծանր թիւրիմացութեան զոհ դարձած այս վշտահար մօրը: Հսկայ տղամարդը, որի զէնքերից մահ էր կաթկաթում, երեսայի պէս շշկել էր այս թոյլ, խեղճ կնոջ առաջ մայրական վշտի վեհութիւնը ընկճել էր նրան:

— Անխիղճ, ո՛ւր է Մինասը. զոյգ գնացիք այն սե գիշերը, այս գիշեր մենակ ես յետ գալիս. ի՛նչ արիր նրան, Կայէ՛ն, գոչեց պառաւը կատաղած, բռնելով և ցնցելով Թորոսի ձեռքը:

— Մարէ՛, չգիտեմ. կուր բռնեցինք տաճիկների հետ. գիշեր էր, մութ, մենք ցրիւ եկանք, իրար կորցրինք, մարէ՛, հաւատա՛, չգիտեմ ի՛նչ եղաւ Մինասը. ամէնքը փախան զանազան կողմեր, ես էլ այս կողմն եկայ, ետեիցս ընկան, գիւղը շրջապատել են, փնտռում են, ծածկիր ինձ, մարէ, ծածկիր Մինասի սիրուն:

Թորոսը ծածկում էր Մինասի մահը, որ իր աչքով տեսել էր, և նոյնիսկ սրբազան զայրոյթով իր ձեռքով գնդակահար արել նրան սպանողին: Մօր սիրտը շատ շուտ հասկացաւ իր ծանր կորուստը, իր մեծ թրշաւութիւնը: Մայրերը չեն խաբւում, երբ զաւակն է մեռել:

— Սպանել են, ճչաց նա. ասում էին, ամէնքն էին ասում, ես սեւաւորս մնակ չէի հաւատում. սպանել են, գո՛ւր ես ծածկում ինձանից, սպանել են իմ ջահիլ-ջիւան կտրիճին: Դո՛ւ, դու տարար անասուած, դու սպանել տւիր, անխիղճ. ինչո՞ւ տարար, ինչո՞ւ խելքից հանեցիր իմ զաւակին. տո՛ւր իմ Մինասին, տո՛ւր: Նա կրկին բռնեց երիտասարդի ձեռքը, ցնցում էր, ճչում էր, գոռում խելագարի պէս:

Աստուծո՛ք քեզ ուղարկել, որ ինձ հաշիւ տաս. ասա՛, ո՛ւր սպանեցին իմ «ազիզին», ո՞վ սպանեց, ո՞ր անօրէնը, ասա՛ էէ՛... լռում ես... Սպանել են, խաբել չե՞ս կարողանում, սուտ ասա՛ էլի՛, խաբիր ինձ, քարասիրտ մարդ. խաբիր անխելք, ցնդած պառաւին. ասա՛, որ դեռ իմ արեւը չի խաւարել, ասա՛, որ իմ տունը դեռ չի աւերւել, իմ օջախը չի հանգել, իմ մութը չի մարել, խաբիր, խաբիր, խաբիր... Չէ՞ Մինասին խաբեցիր տարար. ի՛նչ եղաւ էն «բըլբիւլ լեզուդ», դէ՛ գոնէ ինձ էլ խաբիր, թող սիրտս չճաքի, կամ խանջալդ սիրտս կտի՛ր, որ մի անգամից հանգստանամ. ճչում էր պառաւը գլխին տալով, ձեռները կոտրատելով:

— Մարէ՛, վերստին Աստուծո՛ք կայ, ես չեմ խաբել, ես չեմ տարել, մենք երկուսս էլ կամաւ գնացինք, մենք կամաւ կուցեցինք թշնամիների դէմ: Շատերն ընկան նրանցից էլ մեզանից էլ. թէ՛ ես ընկնէի, մի՞թէ իմ մայրը Մինասին պիտի անի՞ծէր:

Անհարկը հասկանալի էր. երիտասարդն էլ չէր ուզում կեղծել, տեսնելով, որ այդ աւելի է վայրացնում վշտահար մօրը, նա գիտէր, խաբել անկարելի էր:

— Էլ չես ծածկում, սպանել են, ան անգութ, տղամարդ ես, ուժով ես, քաշի գոնէ այս աւերակի սիւնը, թող կտուրը գլխիս ընկնի. ասաց պառաւը, յետ յետ քաշեց, գնաց խրճիթի հակառակ կողմը, կպաւ պատին, կծկեց, մնաց մի քանի րոպէ: Ապա յանկարծ կանգնեց, ձգեց րոյր հասակով, գիմեց դէպի շւարած Թորոսը՝ գոչելով.

— Իսկ դու, քեզ չսպանեցին. ինչու ես եկել եկար որ էլ ուժը խելքից հանես. այստեղ, իմ այս բնի մէջ ի՞նչ ես փնտռում, էլ ի՞նչ թողիր ինձ, մնաց չոր սևաւոր գլուխս, ի՞նչ ես ուզում ինձանից, ինչու չես թողնում, որ մենակ ճչամ, ճաքեմ, ինչու չես հեռանում աչքիցս, որ գոնէ քեզ կենդանի չտեսնեմ: Թող մնամ մենակ, մենակ, թող չորանամ այս ծակի մէջ. ի՞նչ ես ուզում ինձանից:

— Մարէ, մի գիշերայ ապաստան, Մինասի սիրուն:

— Ապաստան... ապաստան... կրկնեց պառաւը դժոխային հեգնութեամբ, խելագարի ժպիտով. քեզ ապաստան, որ ապրես, կեանք ու արեւ տեսնես. չեմ կարող չեմ կարող, իմ ուժից վեր է. գնա, գնա, անասուած, թափառիր Կայէնի պէս. թող իմ որդու գահիճները քեզ էլ հազար կտոր անեն, թող քո մայրն էլ ինձ պէս արիւն-արցունք թափի. թող քո կիներն էլ իմ հարսի պէս սև ձգի գլուխը, թող ողջ աշխարհն արտասուի և սուգ անի, սև հագնի, երբ էլ չկայ Մինասը: Դէ՛ գնա, չես գնա, ես գուրս կ'երթամ, ես կը ճչամ գիւղովը մէկ, թէ յեկէք, այստեղ է իմ որդու մահան պատճառը, եկէ՛ք:

Պառաւն անողոր էր. ժամանակը թանկ: Թորոսը տեսաւ, որ այդպէս երկար մնալ չի կարելի, որ մի վճռական բան պիտի անել:

— Դու մի գնա, մարէ, ասաց նա դառնութեամբ. ես կ'երթամ, և թող ինձ սպանեն քո որդու գահիճները: Թող իմ մայրն էլ արտասուի, եթէ դա կարող է քեզ մխիթարել, թող իմ կիներն էլ սև ձգի, եթէ քո հարսի սևը կը վերանայ նրանով: Ես կարծում էի, թէ իմ թշուառ ընկերոջ մայրը իր մեծ վշտի մէջ գոնէ մի փոքր կը մխիթարւի օգնելով նրան, որի ձեռքը իր որդու մահան վրէժն առաւ և որ իր կեանքի մնացորդը պիտի գործ դնի անընդհատ թափելով նրա թշնամիների արիւնը. և այսպէս պիտի վառ պահի նրա յիշատակը, որովհետեւ այսպէս էր նրա կամքը: Բայց այժմ տեսնում եմ, որ սխալած եմ եղել. դէ՛հ, որ այդպէս է, ես գուրս կ'երթամ, մարէ, դու հանգիստ մնա, թող սպանեն ինձ էլ, միայն դու մխիթարւի, բայց գիտցիր, որ դրանով դու Մինասի սկզբների յաւիտենական հանգիստն ես խռովում:

Ասաց Թորոսը, վերցրեց քիչ առաջ պատին յենած իր հրացանը, նայեց բլթակին, շոշափեց, նայեց իր փափուկանների շարքերին, և իր բազկին ու զենքին ապաւինած, նա համարձակ քայլերով շարժեց դէպի դուռը, թափով քաշեց սողնակը և դուռը բացեց:

— Կաց, ճչաց յանկարծ Մարթան սարսափած, ըզգալով, որ ինքը մի սոսկալի ոճիր է կատարում, երբ նա դուրս էր գալիս դռնից. կաց, անխիղճ, մի, գնա.

— պառաւը վազեց դէպի դուռը, յետ քաշեց Թորոսին, փակեց դուռը կրկին:

— Մի գնա, սևը թող միայն իմ գլխին գայ, թող միայն ես արտասուեմ: Թող իմ տունը միայն աւերւի. կաց, Մինասի մայրը չի կարող նրա ընկերոջը անօրէնների ձեռքը տալ, չի կարող այս չար ժամին տանից դուրս անել...

Մի քանի րոպէ պառաւը մնաց լուռ: Նա մտածում էր...

Ապա նա շտապ, շտապ, խելագարի շարժումներով քանդեց ծաքը, դուրս քաշեց նրա տակից իր հարսի մի ձեռք զգեստը, և փութով հագցրեց Թորոսին, փաթաթեց նրա գլուխը կանացի ձեռքով, վերցրեց հրացանն ու փափուկանները, ցրեց փուած անկողնի մէջ ծածկեց, իրան էլ հրամայեց մտնել այդ անկողնի, նստել, թէ մարդ գալու լինի՝ գլուխը քաշ ձգել, և ձեռքները թէ իբր արտասուում է, առանց վերև նայելու: Թորոսը լուռ հնազանդեց:

Գիւղամիջից լսում էր ոտնաձայն, աղմուկ, խօսակցութիւն: Չայները մօտեցան կամաց կամաց: Դուռը թակեցին: Ոստիկաններն ու գիւղի ուսը շրջում էին տանից տուն, փնտռում էին Թորոսին, ամենքը գիտէին, որ նա փախաւ, գիւղում ծածկեց: Պառաւը ճրագը ձեռքին մօտեցաւ, դուռը բացեց. մի խումբ զինւած մարդիկ ներս թափեցին, նայեցին ամէն կողմ, քանդեցին ծալքը, նայեցին թոնիրը, իյճը, ոչ ոք չկար: Յիսնապետը երկար նայեց արտասուող հարսին. նա մտածում էր, միտքը չար էր. եթէ Թորոսին շուտով զրտնելու հաստատ յոյս չլինէր, մտածեց նա, արժէր մարդկանց դուրս հեռարկել և մի փոքր մնալ այստեղ... բայց... նա ձեռքով շարժում արեց, դուրս եկաւ, որսը թողնելով ուրիշ անգամ:

Միւս օրը երեկոյեան, երբ կրկին խաւարն իջաւ երկրի վրայ, երբ գիւղը լռեց ու քնեց, պառաւը կանչեց Թորոսին.

— Լսիր, որդի, երէկ ես քեզ անիծեցի, այլաւ էր սիրտս. մայր եմ... սև գայ տանի ինձ պէս մօրը, ի՞նչ հողը տամ գլխիս... նա կրկին հեկեկաց, այժմ նրա փոխարէն օրհնում եմ քեզ, որ իմ Մինասի սրտովը լինի...

Արտասուքները այլևս խելքեցին դժբախտ մօրը ձայնը... Թորոսը կռացաւ համբուրեց նրա ձեռքը, ինչպէս կը համբուրէր իր մօր ձեռքը և յուզած դուրս գնաց տանելով ճակատի վրայ պառաւի լուռ, բայց ջերմ համբոյրի հետքը...

Դուրսը դեռ խաւար էր, բայց արշալոյսը հեռու չէր...

ՂԱՐԻՐ

ժ. խմբ. ներառութեան ցանկը կը յետաձգուի լրջորէ համարին:

Խմբագրութեան գիմէլ հետեւեալ հասցեով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)